

ՀՀ գիտութեան տնտեսական և մշակութային
հարցերի վերաբերյալ

ԱՄԵՐԻԿԱՆ Գ. ՋԱՎԱԿՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
(16-20 հոկտեմբեր, 2000 թ., զեկուցումների դրույթներ)

AN INTERNATIONAL ARMENOLOGICAL CONFERENCE
DEDICATED TO THE 80th ANNIVERSARY OF
GEVORG JAHOUKYAN
(October 16-20, 2000, YEREVAN, ARMENIA)



ДУБЛЕТ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ.ԶԱՅՈՒԿՅԱՆԻ 80-ԱՄՅԱԿԻՆ ՆԿԻՐՎԱԾ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
(գեկուցումների դրույթներ)

A II
86184



ԵՐԵՎԱՆ 2000

Խմբագրական կոլեգիա՝

Ակադ. Սերգեյ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բան. գիտ. դոկտ. պրոֆ. Վաղարշակ ՄԱԴՈՅԱՆ

Բան. գիտ. թեկ. Մելաղա ԱՂԱԲԵԿՅԱՆ

Սերգեյ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

**ԼԵԶՎԱԿԱՆ ՈՒ ՈՃԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ**

1. Լեզու և լեզվական նորմ:
2. Լեզվական նորմի ձևավորման ու զնախատման հիմունքները:
3. Լեզվական նորմի դրսևորումները խոսքում: Լեզվական նորմ և համատեքստ. նրանց փոխհարաբերությունը:
4. Արտահայտական և արտահայտչական միջոցներ: Դրանց ոճական դերը:
5. Ոճական նորմ. նրա տարբեր ըմբռնումները:
6. Ոճական նորմ և գործառական ոճ:
7. Լեզվական և ոճական նորմերի փոխհարաբերությունը. գեղարվեստական ոճի յուրահատուկ տեղն այս հարցում:
8. Ոճական նորմի (և առհասարակ ոճական միջոցի) ձևավորումը լեզվական նորմի փոփոխության և խախտման միջոցով: Այս իրողության դրսևորումները բառակազմության, բառերի, նախադասության կառուցվածքի բնագավառներում: Գործառական տարբեր ոճերի յուրահատկություններն այս տեսակետից:

Արմեն ԱՅՎԱԶՅԱՆ
Մ.Մաշտոցի անվ. Մատենադարան, Երևան

**ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՎԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ, ԱՆԳԼԻԱԿԱՆ,
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՈՒ ՌՈՒՄԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՉԲՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ
(համեմատական քննություն)**

1. Հայոց լեզուն հայերի ազգային ինքնագիտակցության ձևավորման վրա ազդեցություն ունեցած պատմական որոշիչ գործոններից է, եթե ոչ՝ ամենավորոշիչը: Լեզվի և ազգային ինքնագիտակցության սերտ կապն արժանացել է արտասահմանյան և նախկին խորհրդային ազգաբանների (էթնոլոգների), սոցիոլոգների և հոգեբանների բազմակողմանի ուշադրությանը: Մեզանում նույնատիպ ուսումնասիրությունները, ցավոք, դեռևս բացակայում են:

2. Արդեն 5-րդ դարում հայ մտավոր ընտրանին լրջորեն քննել և զնախատել է հայոց լեզվի մշակութային և քաղաքական ռազմավարական նշանակությունը: Ընդ որում՝ Հայաստանում ազգային լեզվի արժեքի մասին քննարկումները ծայր էին առել դեռևս մինչև գրերի գյուտը, որ եղավ այդ քննարկումների մեծագույն արդյունքը: Փափսոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Եղիշեի դատողությունները փաստում են ոչ միայն հայերի ազգային ինքնագիտակցության հստակությունը (որը, սակայն, նրանցից շատ ավելի վաղ ժամանակներում էր ձեռք բերվել), այլև 5-րդ դարում հայ ազգային-քաղաքական

մտքի գաղափարականացումը, ասել է թե՛ տեսաբանական բարձր մակարդակի հասնելը:


3. Ազգային լեզվի նկատմամբ նույն կամ նմանատիպ վերաբերմունքը ձևավորվել է Եվրոպայում շատ ավելի ուշ՝ 16-19-րդ դարերում: Արևմտյան մասնագետները նկատել են, որ սեփական լեզուների նկատմամբ հատուկ այս վերաբերմունքը առաջացել է ազգերի ձևավորմանը և նրանց մեջ հայրենասիրական և ազգայնական տրամադրությունների զարգացմանը զուգընթաց:

4. Ազգային լեզուն դառնում է համազգային գիտակցված սիրո և պաշտամունքի առարկա այն ժամանակաշրջաններում, երբ մշակութային զարգացածության որոշակիորեն բարձր աստիճանի հասած էթնիկ խումբը ձեռք է բերում ազգի կայուն հատկանիշներ, այնուհետև, ի դեմս իր մտավորական ընտրանու՝ քաղաքական ընտրանու աջակցությամբ և հովանավորությամբ, ազգային ինքնագիտակցության հետագա հղկումն ու կանոնակարգումը նպատակ ունենալով, սկսում է մանրագնի վերլուծել իր ինքնության տարրերը (այդ թվում՝ ազգային լեզուն)՝ ընդամին տալով դրանց անհրաժեշտությունն ու օգտակարությունը հիմնավորող տեսաբանական-գաղափարախոսական բացատրություններ:


Սամվել ԲԱԲԱՅԱՆ
Երևան

ՀԻՆ ԱՅԲՈՒԲԵՆՆԵՐԻԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հնագույն այբուբենների ծագումնաբանությունը հիմնահարց է գիտության պատմության ուսումնասիրության համար, սակայն զլխավորը աշխարհի առաջին այբուբենների ծագման հիմնահարցն է: Օգտագործելով հետազոտման նոր մեթոդ՝ մեզ հաջողվել է հայտնաբերել օրինաչափություններ հայոց և մի շարք հնագույն այբուբեններում, որոնք հնարավորություն տվեցին բացահայտել այդ այբուբենների ստեղծման սկզբունքները: Այդ օրինաչափությունները կրում են մաթեմատիկական, փիլիսոփայական բնույթ, իսկ սկզբունքները հիմնված են միկրոկոսմի փիլիսոփայական կաղապարների վրա: Կատարված են հետազոտություններ հայկական, հունական և հին սինայական այբուբենների վերաբերյալ: Հետազոտությունները ցույց տվեցին, որ լեզուն և մտածողությունը, ըստ



նկ.1



նկ.2

A	B	G	D
E	S	K	T
P	M	O	N
R	L	T	Y

նկ.3

O	W	L
P	X	Q
=	R	S
+	96	W
~	~	~
~	~	~
~	~	~
~	~	~
~	~	~

նկ.4

նախնիների, ընկած են հոգու կամ միկրոկոսմի գաղափարի մեջ: Հաջողվել է բացահայտել, որ հունական տառանիշները բաղկացած են երկու բաղադրիչներից, մեկը խորհրդանշում է տարերքը, մյուսը՝ զգացողությունը: Կատարելագործելով այդ մոդելը, Մաշտոցը՝ զգացողությունների փոխարեն մտցրել է փիլիսոփայական կատեգորիաներ, որոնց պատկերման համար գտել է տասը նշան:

Նկ.1-ում բերված են Մաշտոցի կողմից վերցված նշանները այն քանակով, որքան նրանք օգտագործված են այբուբենում: Նկ.1-ի աջ կողմում բերված են տարերքների նշանները, որոնք վերցված են Աշխարհի ծառի և սվաստիկայի գաղափարագրերից: Երկու բաղադրիչներ որոշակի ձևով գուգակցելով՝ տալիս են Մաշտոցի գրաֆեմաները (նկ.2): Համաձայն հունական մի ավանդույթի, Կադմոսը ստեղծել է ընդամենը տասնվեց տառ(նկ.3): Այդ աղյուսակում օգտագործած բաղադրիչների քանակը և դասավորությունը համապատասխանում են անտիկ փիլիսոփաների հայացքներին՝ հոգու բաղադրիչների ներդաշնակությամբ: Հին սինայական այբուբենի՝ ձախից հաշված երկու սյունակների 12 նշանները Կենդանակերպի ռճավորված նշաններն են, որոնք դասավորված են բարդ ձևով (նկ.4): Երրորդ սյունակում օգտագործված են հոգու հատկությունները խորհրդանշող գաղափարագրեր: Այս երեք այբուբենների մեջ գոյություն ունի էվոյուցիոն կապ:

Ուսումնասիրման առաջարկվող մեթոդը բույլ կտա թափանցել մյուս հին այբուբենների գաղտնիքների մեջ, հասցնելով ամբողջականության այբուբենների ծագման նոր տեսությունը:

Օֆեյա ԲԱԲԱՅԱՆ
Արցախի ՊՀ, Ստեփանակերտ

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈԽԼԵՐՈՒՄ ԵՎ ՂԱՐԱԲԱԴԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

1. Գրաբարում սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ (վաղակատար-հարակատար ներկա, վաղակատար-հարակատար անցյալ), ապառնի (բաղադրյալ ապառնի, բաղադրյալ անցյալի ապառնի) դերբայներով և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով: Բաղադրյալ դիմավոր ձևեր կազմվում են նաև անցյալ դերբայով և լինել (լինիմ) բայով: Դրանք կարելի է հասկանալ նաև երկրորդական բաղադրյալ ժամանակի իմաստով (սիրեալ լինիմ=սիրվում եմ, սիրած եմ լինում, սիրված եմ լինում):

2. Միջին հայերենում սահմանական եղանակն ունի 6 բաղադրյալ ժամանակ: Ապառնի ու անցյալի ապառնի ժամանակները կազմվում են ոչ և ու վերջավորությամբ ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկայի ու անցյալ անկատարի ձևով: Գերակշռում է ու վերջավորությամբ ապառնի

դերբայը: Վաղակատարը և անցյալի վաղակատարը կազմվում են վաղակատար, հարակատարը և անցյալի հարակատարը՝ հարակատար դերբայով ու օժանդակ բայով: Վաղակատար և հարակատար դերբայները լինիմ կամ բայերի հետ կազմում են մաս երկրորդական բաղադրյալ ժամանակներ:

3. Արևմտահայերենում սահմանական եղանակի համար առանձնացվում են 6 բաղադրյալ ժամանակներ, որոնք կազմվում են վաղակատար, հարակատար, ապառնի դերբայներով և օժանդակ բայի ներկայի ու անցյալի ձևերով: Հարակատար, ապառնի դերբայներով և ըլլալ բայով կազմվում են մաս երկրորդական բաղադրյալ ժամանակներ:

Արևելահայ գրական լեզուն սահմանական եղանակի համար ընդունում էր 8 բաղադրյալ ժամանակ: Գրաբարի, միջին հայերենի, արևմտահայերենի պարզ ժամանակաձևերի փոխարեն արևելահայերենն ունի բաղադրյալ ներկա ու անցյալի անկատար: Աստիճանաբար ճշտվում են հարակատար դերբայի ձևաբանական և շարահյուսական կիրառության շրջանակները: Ժամանակակից հայերենի գիտական քերականության մեջ դիմավոր բայեր են ընդունվում չեզոք և կրավորական սեռի մի շարք բայերի հարակատար դերբայով կազմված ձևերը: Երկրորդական բաղադրյալ ժամանակներով կազմվում են ապառնի, հարակատար, համակատար դերբայներով և լինել բայի խոնարհված ձևերով:

4. Հարաբառի բարբառում նույնպես սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակները կազմվում են անկատար, վաղակատար, ապառնի դերբայներով և օժանդակ բայով: Երկրորդական բաղադրյալ ժամանակներ են կազմվում անակատար (ըշխադում եմ ըլլալ), ապառնի (ըշխըդելու եմ ըլլալ), հարակատար (ըշխըդած ըմ ինում), համակատար (ըշխըդելիս ըմ ինում) և լիել (ինիլ) բայով:

Ջենմա ԲԱՌՆԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ «ԺԱՄԱՆԱԿ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՆՎԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ-ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Վերացականությունը խորք է մեր ժողովրդի լեզվամտածողությանը: Վերացական հասկացություն համարվող ժամանակի բառանվանումը, ըստ ակադ.Գ.Ջախուկյանի, բաց է մնում վաղնջահայերենում: V դարի մատենագրությունից հայտնի ժամանակ իրանական փոխառությունը գրաբարից ժառանգել է արդի գրական հայերենը: Հատուկեմտ բարբառներում գրանցված ժամանակ գուգաբանությունը, ամենայն հավանականությամբ, գրական լեզվի ազդեցության արդյունք է:

Ժամանակ հասկացության դիմաց հայերենի բարբառներում հանդիպող գուգաբանությունները հետևյալ պատկերն են ներկայացնում.

տարածման բավական մեծ շառավիղ ունի այդ հասկացության դիմաց գործառող ԳԱՀ իրանական փոխառությունը, որ խոսվածքներից յուրաքանչյուրում ենթարկվել է տվյալ տարածքին բնորոշ հնչյունափոխության.

Մուշ-Ալաշկերտ-գահ

Մասուն-գահ

Բայազետ-գա'խ

Մակու- գակխ

Վան-Մոկս-կ'ակխ և այլն:

Արևմտյան խմբակցության խոսվածքներում գործառում է ԱՏԵՆ գուգաբանությունը, որը բնիկ հայերեն բառ է: Տեղ → Ժամանակ անցումով Ժամանականիշի արժեք են ձեռք բերել և՛ ԱՏԵՆԸ, և՛ ԳԱՀԸ (առաջինը ժողովի ժամանակը, երկրորդը քաղաքի գահ բարձրանալու ժամանակը արտահայտելու համար): Այս երևույթն առկա է շատ լեզուներում: ԱՏԵՆ (ԱՏԷՆ) ժամանականիշը ժամանակ հասկացության դիմաց զրանցվել է հետևյալ խոսվածքներում.

Սվեդիա-ադեն

Շապին-Գարահիսար- ադեն

Մասուն-ադին

Մալաթիա-ակդին և այլն:

Ժամանակ իմաստով ԱՏԵՆԸ գործառում է արևմտահայ գրական լեզվում:

Գրեթե համահայերենյան գործառություն է ձեռք բերել ՎԱԽՏ փոխառյալ բառը՝ ժամանակ հասկացության դիմաց: Այն առկա է և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներում.

Մուշ, Ալաշկերտ, Մասուն-վախտ

Արարտյան բարբառի բոլոր խոսվածքներում-վախտ

Բիթլիս-ուախտ

Խարբերդ- վախտ

Մակու-վախտ

Հանդն- վախտ

Նախիջևան-վակխտ և այլն:

Եթե ՎԱԽՏ, ԳԱՀ, ԱՏԵՆ գուգաբանությունները ժամանակ բառանվանմանը փոխարինում են վերջինիս բոլոր գործառություններում, ապա ՉԱԽ, ՎԱԴԱ, ԺՈՒԿ, ՍԸՐԱ ձևերն ունեն սահմանափակ կիրառական ոլորտներ: Այսպես՝ վադա (վառդակ) թուրքերենից փոխառյալ բառն ունի ժամկետ իմաստը (Վառդակն եկավ = ժամանակը, ժամկետը լրացավ):

Խխտ վերացական, կոնկրետությունից զուրկ ժամանականիշը չի կարող գործառել ժողովրդի լեզվում:

Ամայա ԲԱՐՍԵՂՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ԱՆՎԱՆԱԲԱՅԱԿԱՆ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԽՆԴԻՐ ԵՎ ՊԱՐԱԳԱ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ

Անվանաբանական ստորոգյալի լրացումները պայմանավորված են նրա բաղադրիչների բառաքերականական հատկանիշներով: Սա վերաբերում է թե՛ գոյականական և թե՛ բայական անդամի լրացումներին:

Եթե բայով արտահայտված ստորոգյալը բնականաբար ընդունում է միայն խնդիր և պարագա լրացումներ, ապա անվանաբայական ստորոգյալը կարող է ընդունել թե՛ գոյականական և թե՛ բայական անդամի լրացումներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ունի և՛ գոյականական, և՛ բայական բաղադրիչներ:

Մասնավորապես բայական անդամի լրացումներ ընդունելու յուրահատկությունը պայմանավորված է անվանաբայական ստորոգյալի բաղադրիչների իմաստային ու քերականական հատկանիշներով: Այսպիսի ստորոգյալները կարող են ընդունել և՛ խնդիրներ, և՛ պարագաներ, ըստ որում զգալի սահմանափակումներով, որոնք ներկայացվում են զեկուցման մեջ: Խնդիրներ կարող են ընդունել քննարկվող կառույցի այն ստորոգյալները, որոնք արտահայտված են բայանուններով:

Լրացումների հարցում հանգույցը կարևոր դեր է կատարում հատկանիշի վերագրման ժամանակային ձևավորման խնդրում: Ակնհայտ է նաև, որ հանգույցը իր իմաստային յուրահատկությամբ պայմանավորում է առավելապես պարագա լրացումներ:

Լիանա ԲԱՐՍԵՂՅԱՆ
ԵՊՀ, Երևան

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԳՈՎԱԶԴՆԵՐԻ ՏԵԶՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐԶ

Ձեկուցումը նվիրված է հայկական հեռուստատեսային գովազդների տեքստերի լեզվաբանական վերլուծությանը:

Մեր իրականության մեջ գովազդը համեմատաբար նոր երևույթ է: Հեռուստատեսային գովազդների լեզվական տեքստերը այժմ կազմավորման փուլում են և շատ դեպքերում հեռու են կատարյալ լինելուց:

Ձեկուցման նպատակն է քննել հեռուստատեսային գովազդների տեքստերի ստեղծման մեխանիզմները, վերլուծել դրանք բազմակողմանիորեն՝ լեզվական տարբեր մակարդակներով, ուսումնասիրել հաջող տեքստերը, բացահայտել այն լեզվական և հոգեբանական գործոնները, որոնք դարձնում են գովազդների լեզուն կենսունակ, արդիական, տպավորիչ:

Նշված խնդիրների ուսումնասիրության նպատակով ձայնագրվել և լեզվաբանական ուսումնասիրության է ենթարկվել հայկական հեռուստատեսային գովազդների որոշակի քանակ: Այդ լեզվագիտական ուսումնասիրության ընդհանուր արդյունքներն էլ ամփոփվում են սույն զեկուցման մեջ: Այս կապակցությամբ անդրադարձել ենք հետևյալ մասնավոր խնդիրներին՝

1. Հեռուստատեսային գովազդը և դրա առավելությունները գովազդի մյուս տեսակների նկատմամբ:
2. Հեռուստատեսային գովազդների տեքստերի ընդհանուր կառուցվածքը:
3. Հեռուստատեսային գովազդների տեքստերում գործածված նախադասությունների տեսակները ըստ հնչերանգի և կառուցվածքի:
4. Հեռուստատեսային գովազդների տեքստերի ձևաբանական վերլուծությունը:
5. Հեռուստատեսային գովազդների տեքստերի իմաստաբանական վերլուծությունը:
6. Ոճական հնարքների գործածությունը հեռուստատեսային գովազդների տեքստերում:
7. Ազգային-մշակութային, վերմշակութային, ինչպես նաև արևմտյան իրույթների վերհանումն ու վերլուծությունը հեռուստատեսային գովազդներում:

Լիլիթ ԲՐՈՒՏՅԱՆ
ԵՊՀ, Երևան

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Զեկուցման նպատակը Դավիթ Անհաղթի լեզվաբանական հայացքների վերլուծությունն է:

1. Դիտարկվում են Դավթի հայացքները լեզվի և մտածողության, լեզվական և տրամաբանական կարգերի փոխհարաբերության վերաբերյալ: Մասնավորապես, վերլուծվում է քերականության և տրամաբանության մեջ որոշիչ և անորոշ հոդերի դերի տարբերությունը՝ ըստ Դավթի: Դիտարկվում են մեծ մտածողի հայացքները՝ քերականության և այլ գիտությունների, մասնավորապես, փիլիսոփայության փոխհարաբերության մասին:
2. Վերլուծվում է անվան և սահմանման հիմնահարցը Դավթ Անհաղթի աշխատություններում, ինչպես նաև՝ անվան և սահմանման, սահմանման և նկարագրության, անվան և իրի, անվան և ստուգաբանության փոխհարաբերության հարցերը:
3. Մեկնաբանվում են Դավթի հայացքները քերականական կարգերի, բվի, հոլովի կարգերի վերաբերյալ: Դիտարկվում են բային և շաղկապին առնչվող նրա հայացքները:

4. Վերլուծվում են մեծ մտածողի՝ բառին առնչվող մտորումները, մասնավորապես, լուսաբանվում են հետևյալ խնդիրները. բառերը և դրանց նշանակությունները, բառերի և արտահայտությունների ճիշտ մեկնաբանությունը, բառերի կիրառությունները, բազմիմաստությունը և բազմիմաստ բառերի նշանակությունների ճշգրտումը, ինչպես նաև համանունների և հականիշների հարցերը:
5. Արծարծվում են տեքստաբանական, համատեքստային վերլուծության հարցերը և հերմենևտիկայի հիմնահարցը Դավթի աշխատություններում:
6. Վերլուծվում է Դավթի Անհաղթի տերմինաստեղծ գործունեությունը, մասնավորապես, նրա ներդրումը հայկական տրամաբանական-փիլիսոփայական տերմինաբանության զարգացման մեջ:
7. Դիտարկվում են Դավթի հայացքները շարադրանքի ոճի և լեզվամտածողության մասին, դրա հետ կապված՝ փոխաբերությունների, համեմատությունների և այլ ոճական հնարքների հարցերը:

Անահիտ ԳԱԼՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ՄԱՆԿԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մանկական խոսքի ուսումնասիրությունը հոգելեզվաբանության կարևոր և հետաքրքիր բնագավառներից է:

1-5,6 տարեկան երեխայի խոսքը՝ որպես նրա հոգեբանության, մտքի դրսևորում, ուսումնասիրության առարկա կարող է լինել և՛ հոգեբանի, և՛ լեզվաբանի, և՛ հոգելեզվաբանի, և՛ փիլիսոփայի համար: Եվ յուրաքանչյուր գիտաճյուղի տվյալներն ու դիտարկումները կարող են օժանդակել այդ բարդ, բազմաշերտ ու բազմաչափ ոլորտի երևույթների լուսաբանմանն ու նկարագրմանը, պատճառաբանմանն ու ճանաչմանը: I լեզվի յուրացման օրինաչությունների, որոշակի կադապարների վերհանումը ունի կիրառական նշանակություն՝ այդ լեզվի, ապա՝ նաև II, III լեզուների ուսուցման ընթացքում:

Մայրենի լեզվի տիրապետման շրջանում՝ 2-5 տարեկանում, երեխայի գործածած լեզվական ձևերի և արտահայտությունների այս կամ այն միավորի ընտրության հարցը պայմանավորվում է արտալեզվական գործոններով, կարևորվում են և՛ արտալեզվական միջավայրը, և՛ երեխային շրջապատող մեծահասակների լեզվական վարքը:

Երեխայի խոսքի զարգացումը դիտարկվում է որպես նրա ընդհանուր մտավոր զարգացման մի մաս: Երեխայի կողմից մեծահասակների խոսքի ընկալումը, նոր բառերի յուրացումը, մտապահումն ու գործածությունը դիտվում է ավելի լայն համատեքստում, քան բանավոր խոսքն է: Խոսքը շփման միջոց է, այնպես որ մանկական խոսքի հոգելեզվաբանական վերլուծությունը անպայմանորեն ենթադրում է առավել լայն ոլորտի՝ շփման հոգեբանության օրինաչափությունների դրսևորումը, կիրարկումը:

Երեխաների խոսքում սովորական երևույթ է բայերի, դերանունների և գոյականների ուրույն ձևափոխումը, որն ինքնուրույն համաբանության հետևանք է: Հաճախ հանդիպում են ստուգաբանության հետևանքով կատարվող շեղումներ, լեզվում գոյություն ունեցող կայուն կապակցությունների անջատում, խախտում, դարձվածքների ուրույն ըմբռնում, իմաստավորում և վերլուծություն: Ուշագրավ են հոմանիշների ու հականիշների յուրահատուկ գործածությունը, խոսքային շղթայի ուրույն ըմբռնումը:

Աշոտ ԳԱԼՍՏՅԱՆ
Խ.Արովյանի անվան ՀՊՄՀ, Երևան

ԵՐԿՆՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ՈՃԵՐՈՒՄ

1. Մարդկային հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքային գործունեությունն է, որի մեջ երկխոսությունն ունի խոշոր կշիռ: Մտածողության և մարդու մտային գործունեության զարգացման հետ փոխվում են երկխոսության դրսևորման ձևերը:

2. Թեպետ գիտական խոսքը հիմնականում մենախոսության բնույթ ունի, սակայն երբեմն գիտնականը երկխոսությունն օգտագործում է որպես հնարան՝ ասելիքը գրույցի ձևով ներկայացնելու նպատակով:

Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի «Ջրույցներ հայոց լեզվի մասին» հանրամատչելի գիրքը, ակադ. Գ. Բրուտյանի «Ժամաստասիրական երկխոսություններ» ուսումնասիրությունը գրված են հարց ու պատասխանի ձևով: Գիտական փաստերի մատուցման նման եղանակը ավելի հետաքրքրական ու մատչելի է դարձնում նյութը:

3. Գիտական ոճում երբեմն տեղ են գտնում հեղինակի ինքնահարցադրումներ, որին հետևում է պատասխանը: Երկխոսության կառուցվածքային այս ձևը շարադրանքը դարձնում է բազմազան և անմիջական:

4. Երկխոսությունն իբրև մտքերի մատուցման եղանակ կիրառվում է հրապարակախոսական ոճում տարատեսակ դրսևորումներով՝ հարցադրույց, առանձնազրույց, ճեպազրույց, ճեպահարցազրույց (ճեպ-вопрос) և այլն: Այստեղ երկխոսությունը կառուցվում է ոչ թե գեղարվեստական եղանակով, այլ հրապարակախոսական միջոցներով: Քարոզչական նպատակը իր հետ բերում է համապատասխան միջոցներ, որոնք ազդում են հրապարակախոսական ոճի ձևավորման և կառուցվածքի վրա:

5. Մ. Կապուտիկյանի «Երկխոսություն իմ և իմ միջև» պոեմը գրված է երկխոսության սկզբունքով, որի շնորհիվ բանաստեղծ-հրապարակախոսի ասելիքը դառնում է առավել անմիջական ու ներգործուն: Գեղարվեստական այս բարձրարժեք ստեղծագործությունը կառուցվածքով և ոճով որոշ չափով հարում է հրապարակախոսական ոճին:

ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՁԵՎԱԲՄԱՍՏԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՒՄ

1. Հայոց լեզվի տարածքային տարբերակներում անցյալ կատարյալ ժամանակի իմաստը արտահայտվում է քերականական զանազան ձևերի օգնությամբ:

Հայ բարբառագիտության զարգացման ժամանակակից փուլում, երբ նկարագրված և ուսումնասիրված են բազում բարբառային միավորներ, կուտակված է հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով շուրջ 500 հայկական բնակավայրերից հավաքված և դեռևս գիտական շրջանառության մեջ չդրված լեզվական հսկայածավալ նյութ, անհրաժեշտություն է առաջանում վերանայել և նոր փաստերի առկայությամբ տալ անցյալ կատարյալ ժամանակաձևի տարածքային նկարագիրը, պարզել նրա ձևաբանական կառուցվածքում կատարված պատմական տեղաշարժերը:

2. Գրաբարյան անցյալ կատարյալ ժամանակաձևը հայերենի բարբառային միավորներում կրել է հիմնականում դիմային վերջավորությունների փոփոխություն: Գրաբարի եզակի երկրորդ դեմքի եր և հոգնակի առաջին դեմքի աք դիմաբվանիչ վերջավորությունների փոխարեն անցյալ կատարյալի բայական հարացույցում գործառում են իր և ինք, իսկ եզակի երրորդ դեմքում՝ եա/ ե հերթագայությամբ՝ եց մասնիկները:

3. Բարբառներում անցյալ կատարյալը գործառում է երկու ձևով՝ պարզ և բաղադրյալ:

Պարզ կազմությամբ բարբառային միավորներում անցյալ կատարյալը կազմվում է անցյալի հիմքին ավելացնելով ժամանակադիմաբվանիչ ցուցիչներ, որոնք, ըստ լծորդությունների սեռային պատկանելության, բաժանվում են երկու խմբի՝ ներգործաձև և կրավորաձև:

4. Բաղադրյալ կազմությամբ տարածքային տարբերակները անցյալ կատարյալի իմաստը դրսևորում են վաղակատար դերբայի և օժանդակ բայի օգնությամբ: Դրանցում հարակատար դերբայով բաղադրված ժամանակաձևերը երկիմաստ են. կիրառվում են քե՝ հարակատարի և քե՝ վաղակատարի իմաստներով:

5. Ի տարբերություն գրաբարի, ե խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալի հարացույցում գործառում են ինչպես ներգործաձև, այնպես էլ կրավորաձև վերջավորություններով կամ դրանց զուգահեռ գործածությամբ:

6. Հիմքակազմության մեջ բարբառները գրաբարի համեմատությամբ սովորաբար մեծ տարբերություններ հանդես չեն բերում, բացառությամբ ե խոնարհման պարզ բայերի: Սրանք անցյալ կատարյալի հարացույցում գործառում են երկու հիմքով՝ անդորմշի և կատարյալի /ցոյական/:

7. Հայերենի տարածքային տարբերակներում անցյալ կատարյալը անկանոն բայերի դեպքում հատկանշվում է եզակի թվի 3-րդ դեմքի ձևերի

բազմազանությամբ: Սրանցում եզակի 3-րդ դեմքում հանդիպում են ավ, եզ վերջավորությամբ տարբերակներ, գրաբարյան նախահավելվածով ձևեր, ինչպես նաև վերորերյալ կազմությունների զուգահեռ գործառություններ:


Դավիթ ԳՅՈՒԼՁԱԴՅԱՆ
ՀՀ լեզվի պետական տեսչություն, Երևան

ՍՏՈՐՈԳՄԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Այս ուսումնասիրության մեջ ստորոգման լեզվախոսքային շերտավորվածության հիմք են ընդունվում Էդ. Աթայանի լեզվական գոյամակարդակները:

1. Էդ. Աթայանի լեզվախոսքային հարաբերությունը լայն տարածում գտած լեզու/խոսք երկփեղկման փոխարեն ներկայացնում է համակարգ-լեզու/շարակարգ-լեզվախոսք/գծակարգ-խոսք ընդգրկում բանաձևով, ուր լեզվատրամաբանական համակարգից խոսքային-նյութական/հնչյունային գծակարգ և հակադարձ անցման ժամանակ կարևորվում է մի կողմից՝ մինչև վերջերս անտես առնված հոգեբանական՝ լեզվախոսքային միջնորդ օղակի գոյությունը, մյուս կողմից՝ հաջորդաբար գոյամակարդակից գոյամակարդակ անցման պահը:

2. Ըստ այդմ՝ լեզվական համակարգի վերնոլորտը տոգորված է ինքնին անտրոն, բայց և ներունակորեն տրոհելի էութենականությամբ. այդտեղ ամեն ինչ է՝ /est/ է՝ դրսևորվելիս արդեն բաժանելի առարկա-հատկանիշ/բայ-գոյական-ածական-մակբայ բաժանարարների, այլ կերպ ասած՝ վերնոլորտը այլ բան չէ, եթե ոչ՝ հիշյալ բաժանարարների ներքին համակցությունների գոյարան: Այս համակարգի միջնոլորտում երկփեղկում է կատարվում. ունենում ենք մի կողմից՝ ստորոգիչ /է/, մյուս կողմից՝ երկու ստորոգելի. վերջիններս դիտարկվող գոյամակարդակի ներքնոլորտում որոշարկվում են. մեկը փոխարկվում է ստորոգյալի (Մ. Արեղյանի ըմբռնմամբ), մյուսը պահպանում է իր ստորոգելիությունը. այս ոլորտում ստորոգիչը ձեռք է բերում իր՝ դեռևս չարտահայտված /արտահայտելի/ դիմարկվային տեսքը: Ահա այս տրամաբանական մակարդակի կառուցվածքային եռանդամությունը՝ ստորոգիչ/ստորոգյալ/ստորոգելի կադապարային բաղկացությամբ, հոգեկան-իրադրականը ներհյուսելով ամբողջության մեջ, սերում է մակերեսայինը՝ խոսքային գծակարգը: Այսպես. եթե խոսողը հաղորդելու է վարդի կարմրության իրողությունը, ապա համակարգային գոյամակարդակի միջնոլորտում հաղորդելին ունի է-վարդ-կարմիր անտարրորշ տեսքը (ստորոգիչ և երկու ստորոգելի). ներքնոլորտում որոշարկվումը տեղի է ունենում երկու հնարավորից մեկի կառուցվածքային արտահայտությամբ (այստեղ զանց ենք առնում շարադասության և առկայացական տրոհման հարցը), որն իր համապատասխանությունն է ունենում գծակարգում:



Ստորոգիչը ստորոգական հորինվածքի ստորոգող անդամն է, ստորոգյալը՝ ստորոգված, իսկ ստորոգելին՝ այն անդամը, որն ի գործ է ստորոգյալ դառնալու՝ ստորոգվելու: Չուտ կառուցվածքաբանորեն գերադաս անդամը ստորոգիչն է, իսկ ստորոգյալն ու ստորոգելին նույնադասորեն ստորոգչին ստորադասված փոխատեղելի անդամներ են և ձևավորում են այսպես կոչված համանույնադաս դրավորական (դիրքային) հարաբերություն:

3. Տրամաբանական ու հոգեբանական պահերի համատեղմամբ «մաքուր» կառուցվածքային եռանդամությունը ներկայանում է կառուցվածքային երկանդամությամբ: Արտահայտվելիք և արտահայտված նախադասության մեջ ստորոգելին ենթական է, և ենթական միշտ ստորոգելի է, իսկ ստորոգիչն ու ստորոգյալը միասին կազմում են նախադասության գերակա անդամը. այսինքն՝ նախադասությունը մեկ գլխավոր անդամ ունի. այլ կերպ լինել չի էլ կարող. գլխավոր է այն անդամը, որում համատեղված են ստորոգիչն ու նույնադաս անդամներից մեկը: Այս կերպ արդարանում է նաև նախադասության ենթակայի այսպիսի անվանումը. այն ենթակա է գերակա անդամի նկատմամբ, գերակայի՝ ենթական է:

Այս ամենով՝ ստորոգումը հատկանիշի վերագրումն է ենթակային առարկայնաբար կամ առարկայնացված հատկանիշի վերագրումն է ենթակային. ասել է թե՛ ստորոգյալը միշտ փոխանվանական արժեքով է հանդես գալիս: Մասնավորապես ստորոգման ոլորտում կատարած գրաբարի և արևելյան աշխարհաբարի ուսումնասիրությունն է հանգեցրել այս համոզմունքին: Այդ երկու լեզվում էլ ստորոգյալը կամ բուն առարկայական հարց է կրում, կամ՝ առարկայնություն ներառող հատկանշային հարց: Նաև ստորոգման մեջ առկա այս փոխանունությունն է, որ հսկայական խնայողություն է ապահովում լեզուներում:

Գայանե ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ԶԱՅՆԱՎՈՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԺԳՆՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՇՏԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ
ԳԵՊԷՈՒՄ

Խոսքի հաղորդակցման ընթացքում առանձին բառի արտասանությունը ոչ հաճախ հանդիպող երևույթ է: Բառը, որպես լեզվի

խմաստակիր միավոր, հանդես է գալիս այլ բառերի հետ կապակցված: Ուստի, գտնվելով նախադասության կազմում, նա հայտնվում է այլ պայմաններում, քան առանձին վիճակում:

Բառից ավելի մեծ միավորներում (շարույթ, նախադասություն) բառին հատուկ բնութագրերը փոխվում են: Այդ փոփոխություններն առավել ակնհայտ են դառնում տրամաբանական շեշտի առկայության պայմաններում: Տևողության և ուժգնության նկատելի բարձրացում է նկատվում, երբ բառն ընկնում է տրամաբանական շեշտի տակ:

Ուսումնասիրության ենթարկված պատմողական բնույթի նախադասություններում ակնառու է այն օրինաչափությունը, ըստ որի ձայնավորի տևողությունը և ուժգնությունը առավելագույնն են, երբ կրում են նախադասության տրամաբանական շեշտը:

Շեշտակիր և անշեշտ ձայնավորների փորձառական ուսումնասիրությունը ապացուցում է այն իրողությունը, որ անշեշտ ձայնավորների տևողությունն ու ուժգնությունը նվազագույնն են՝ համեմատած շեշտակիր և մանավանդ տրամաբանական շեշտի տակ գտնվող դիրքերի: Այդ տարբերությունը կազմում է միջինը 189 միլիվայրկյան անշեշտ ու շեշտակիր համեմատության մեջ և մոտ 90-100 միլիվայրկյան շեշտակիր և տրամաբանական շեշտի տակ գտնվող ձայնավորների տևողությունների համեմատության դեպքերում:

Նմանատիպ երևույթ է նկատվում ուժգնության տվյալները համեմատելիս: Տրամաբանական շեշտի տակ ձայնավորի ուժգնությունը մոտավորապես երկու անգամ հզոր է, քան սովորական շեշտակիր դիրքում և մոտավորապես 2.5 անգամ զերազանցում է անշեշտ դիրքի ձայնավորի ուժգնությանը:

Այսպիսով, ձայնավորի ֆիզիկական բնութագրերը (տևողություն, ուժգնություն) իրենց առավելագույն արտահայտությունն են ստանում տրամաբանական շեշտով պայմանավորված: Դրանք տրամաբանական շեշտի տակ մոտ երկու անգամ մեծ են, քան սովորական պայմաններում:

Հովհաննես ԶԱԲԱՐՅԱՆ

ՀՀ լեզվի պետական տեսչություն, Երևան

ԿՈՂՄՆԱԿԻ ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՈՒԴԻՂ ԽՆԴԻՒ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ըստ հայագիտության մեջ ընդունված տեսակետի՝ կողմնակի ենթական արդի արևելահայ գրական լեզվում սովորաբար ձևավորվում է սեռական (տրական) հոլովով: Երբեմն այլընտրաբար այն կարող է լինել նաև ուղղական հոլովով: Կողմնակի ուղիղ խնդիրը չի տարբերվում սովորական ուղիղ խնդրից:

Հետազոտությունները, սակայն, բացահայտում են շատ ավելի բազմազան պատկեր:

Դերբայական դարձվածների մեծ մասը այս կամ այն չափով ստորոգման երանգ ունի: Որքան ուժեղ է այդ երանգը, այնքան ավելի է հակված տվյալ դարձվածի կողմնակի ենթական նման լինելու սովորական ենթակային, այսինքն՝ ձևավորվելու ուղղական հոլովով:

Կան դերբայական դարձվածներ, որոնց կողմնակի ենթական կարող է լինել միայն ուղղական հոլովով (*Հյուրերը դեռ չեկած*՝ մենք սեղանը զգեկվերջացրել էինք): Սրանց թվին են պատկանում այն դերբայական դարձվածները, որոնց ենթական համընկնում է բուն նախադասության ենթակայի հետ (Կնոջից *նա* բաժանվելու առիթ էր փնտրում):

Կան դերբայական դարձվածներ, որոնց կողմնակի ենթական կարող է լինել թե՛ ուղղական հոլովով, թե՛ սեռականով (Մի օր էլ գյուղում լուր տարածվեց *կովի* վերջանալու և *գորբի* տուն գալու մասին):

Կան դերբայական դարձվածներ, որոնց կողմնակի ենթական կարող է լինել միայն սեռական հոլովով (*Շան* հաչելն էլ փեշակ է: Ես չեմ կարդում *քոջս* ստացած նամակները):

Կողմնակի ենթական կարող է լինել նաև կապական ձևավորումով՝ նմանվելով ներգործող խնդրի (*Բժիշկների կողմից* վիրավորին հիվանդանոց տեղափոխելը շատ կարճ տևեց):

Կողմնակի ուղիղ խնդիրը իրի առման դեպքում երբեմն այլընտրաբար կարող է ձևավորվել նաև սեռական հոլովով (Նախընտրելի է *թքվածնի* ջրից էլեկտրոլիզով անջատելու եղանակը):

Այս ամենից բացի, լինում են նաև բացառական հոլովով ձևավորված մասնական կողմնակի ենթականեր և ուղիղ խնդիրներ (Հիվանդ ժամանակ քո *համադասարանցիներից* մեր տուն չայցելելու հանգամանքը մտորելու առիթ է տալիս: Այդ *պանրից* ուտելիս հիշում եմ մեր սարատեղը, տատիս):

Հասմիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

«ԱՐՈՒ ԶԱՎԱՆ» ԲԱՌԱՆՎԱՆՍԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

1. Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերի ուսումնասիրությունը լեզվաբանական աշխարհագրության տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Հայ լեզվաբանության մեջ այս խնդրին տարբեր տեսանկյուններից անդրադարձել են Հր.Աճառյանը, Գ.Զահուկյանը, Հ.Ասմանգուլյանը, Գ.Հակոբյանը:

2. Մույն գեկուցման մեջ անդրադարձել ենք հայ բարբառներում «արու գավակ» հասկացության բառային զուգաբանություններին: Դրանք են տղա,

լաճ, մանչ, պօլուզ, գյադա, գադուլ, վօրքի, տրց, տրց տղա, տղա խօխա, մանչ տղա բառերն ու բառակապակցությունները:

3. Տղա բառանվանումը (տըղա, դըղա, տըղօ, դօղօ, դըղը հնչյունական տարբերակներով) իր նախնական նշանակությամբ՝ մանուկ, փոքր երեխա, կղզյակների ձևով գործառույթում է Խոյ-Մարադայի, Փոքր Ասիայի (Կարինի բարբառ) բարբառախմբերի, Պոլսի միջբարբառի (Օրդու, Տրապիզոն, Ռոդոսքո) խոսվածքներում: Իսկ բառային այս զուգաբանությունը «արու գավակ» սեռատարիքային իմաստով ազգակցական տերմինի արժեք ունի հիմնականում արևելյան տարածքի՝ Արարատյան բարբառախմբի համարյա բոլոր բարբառներում, Ղարաբաղ-Շամախիի, Ագուլիս-Մեղրիի, մասամբ՝ Վանի միջբարբառախմբի, Փոքր Ասիայի, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբերում:

4. Տարածքային ընդգրկման ծավալով հաջորդ բառազուգաբանությունն է լաճ-ը (լաճ, լաջ, լաճ, լաճ): Վերջինս միջինհայերենյան բառ է՝ ուստր, մանչ, տղա իմաստով: Լաճ բառը գործածական է Վանի, Խոյ-Մարադայի, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբերում:

5. Մանչ (մանչ, մօնճ, մօնչ) բառանվանումը բնիկ հայկական բառ է (հնիս. mas «տղայ» արմատից, որը հայերենում տալիս է մա, բայց չաճականով տվել է մաչ, ապա ն-ի հավելումով՝ մանչ), որը կորցրել է իր գրաբարյան «գավակ» նշանակությունը և վերածվել զուտ սեռատարիքային բառանվանման: Այն առկա է Պոլսի միջբարբառի (Ռոդոսքո, Նիկոմեդիա, Տրապիզոն, Օրդու) խոսվածքներում, Ալևի բարբառում:

6. Սահմանափակ տարածքային ընդգրկումներ ունեն պօլուզ (Զեյթուն), կուռիլի (Մասուն՝ Հոսներ), գադուլ (Լոռի՝ Շամուտ), տրց, տրց տըղա (Գորիս՝ Խնձորեսկ), տըղա խօխա (Հաղրուք, Շուշի) բառերն ու բառակապակցությունները:

Ֆրիդրիխ ԽԼ ՂԱԹՅԱՆ
ԵրՕԼԻ, Երևան

ՀԱՅԵՐԵՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ ՏԱՌԱԴԱՐՉՄԱՆ
ՄԱՍԻՆ

Հայաստանի անկախացումից հետո քաղաքական, ամստեսական, սոցիալական բնույթի հիմնախնդիրներից բացի առաջ քաշվեցին նաև մի շարք լեզվական հարցեր, ինչպես, օրինակ՝ հին ուղղագրությանը վերադառնալը, արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցումն ու միասնականացումը և այլն:

Մի կողմ բողոքելով այս շարքի անլուծելի խնդիրները և մերժելով գիտական հարցերի քաղաքականացման միտումները՝ նշենք, որ վերջին տարիներին մեզանում զգալի քայլեր են կատարվել գրական լեզվի երկու

տարբերակների բառապաշարի, հատկապես տերմինաբանության միասնականացման ուղղությամբ:

Կա մի բնագավառ, ուր միասնականացման պահանջը հրամայական է և հապաղումը՝ վնասակար: Բայց, ցավոք, այդ ուղղությամբ ոչինչ չի արվում: Մինչդեռ բարի կամքի առկայության դեպքում կարելի է հեշտությամբ համաձայնության գալ: Խոսքը վերաբերում է հատուկ անունների տառադարձմանը:

Արևելահայերենի և արևմտահայերենի բաղաձայնական համակարգերի և արտասանության տարբերության պատճառով օտար անունները հայերեն և հայերեն անուններն օտար լեզուներով տառադարձվում են տարբեր կերպ:

Բրյուսել - Պրյուսել, Բելգիա - Բելջիբա, Ճապոնիա - Ջափոն և այլն:

Առավել անհանդուրժելի է հայերեն անունների տառադարձման անմիօրինակությունը: Երբեմն օտար լեզվով տպագրվող լրագրի նույն համարում հայերեն նույն անձնանունը կամ տեղանունը գրվում է տարբեր ձևերով՝ նայած թե հոդվածը որտեղից է ստացվել՝ Հայաստանից, թե Սփյուռքից: Օրինակ՝

Տեր - Պետրոսյան - Ter - Petrossyan - Der - Bedrossyan,

Կարապետ - Karapet - Garabed,

Հակոբ - Hakob - Hagop,

Տոնապետյան - Tonapetyan - Donabedian,

Տարոն - Taron - Daron,

Տաշիր - Tashir - Dashir և այլն:

Այս վնասակար անմիօրինակությունը վերացնելու համար պետք է պահպանել օտար բառերի տառադարձման դեպքում գրավոր պատկերի հաշվառման ավանդական սկզբունքը, իսկ հայերեն անուններն օտար լեզուներով տառադարձելիս հիմք ընդունել արևելահայերենի հնչյունագրային պատկերը, որն առավել մոտ է գրաբարյանին:

Անդրանիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սյունյաց «ՏԱԹԵՎ» համալսարան, Գորիս

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Կրկնությունը ուղեկցում է ոճաբանորեն չեզոք հաղորդմանը և հուզական կամ գնահատողական-վերաբերմունքային իմաստ է հավելում լեզվական միավորների բուն կամ առարկայական նշանակությանը, ծառայում է ասույթի հուզարտահայտչական երանգավորմանը: Լեզվական միավորների կրկնությունները իրավիճակային կիրառություններ են, որոնք կանոնական ձևերին իրենց հաճախականությամբ զիջում են, ներգործման ուժով՝ գերազանցում: Կրկնությունն առավել համակողմանիորեն է արտահայտվում հայերենի շարահյուսական մակարդակում: Այստեղ

իրացվող կրկնությունները բաժանվում են երեք խմբի՝ քերականական, ոճական և իմաստային:

Քերականական կրկնությունները շարահյուսական տարբեր միավորների կրկնություններ են՝ նշանակյալ իմաստներն առավել ճշգրիտ ու ընդգծված արտահայտելու համար: Այսպիսիք են ենթակայի, ստորոգյալի և երկրորդական անդամների կրկնությունները տարբեր կառուցվածքի նախադասություններում, նախադասության հարակից միավորների, բարդ նախադասության բաղադրիչների, ինքնուրույն նախադասությունների, անգամ ամբողջական պարբերությունների կրկնությունները, երբ դրանք հավելյալ իմաստ՝ հույզ ու արտահայտչականություն չեն դրսևորում:

Ոճական կրկնությունը շարահյուսական միավորների այն կրկնությունն է, որն արտահայտում է խոսողի (գրողի) հույզերն ու ապրումները, ակտիվ վերաբերմունքը՝ խոսքը դարձնելով արտահայտիչ ու պատկերավոր: Շարահյուսական միավորների քերականական կրկնությունը դառնում է նաև ոճական կրկնություն, ձեռք է բերում ոճական արժեք, երբ այն միտված է լինում ասելիքը զգացական, պատկերավոր ու արտահայտիչ դարձնելուն: Այս դեպքում, որպես կանոն, կրկնյալը մեծ մասամբ ոճականորեն չեզոք է կամ ոչ նշանակիր, իսկ կրկնորդը նոր տեղեկություն չի պարունակում, այլ լինում է իրադրական կամ իրավիճակային գործածություն և հիմնականում ոճականորեն երանգավորված է, նշանակիր. այն արտահայտում է խոսողի զգացական կամ գնահատողական վերաբերմունքը, և հուզական իմաստը դառնում է նրա հավելիմաստը: Հատկապես գեղարվեստական խոսքում շարահյուսական կրկնությունները մեծ մասամբ ունենում են ոճական նշանակություն և իրացվում են որպես լեզվական արտահայտչամիջոցներ՝ հարակրկնություն, վերջույթ, կցուրդ, օղակ, հակադրություն, հանգույց, համաստիճանություն, հոլովույթ, պարույթ և այլն:

Իմաստային կրկնությունը աստիճանավորումն է՝ շարահյուսական միևնույն կառույցում նույն իմաստի դրսևորումը լեզվական հարիմաստ ձևերով: Քանի որ հարիմաստ կամ համանիշ բառերը նախադասության մեջ իրար հաջորդում են իմաստի ուժեղացման կամ քուլացման կարգով, ուստի աստիճանավորումը լինում է երկու տեսակ՝ ա) բարձրացող, երբ հարիմաստ բառերից վերջինը նախորդի իմաստը սաստկացնում է, ուժեղացնում, և բ) իջնող, երբ համանիշ բառերը նախադասության մեջ շարադասվում են իմաստի քուլացման հերթազայությամբ:

Դարիկո ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՀԱճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

Գ.ՋԱՀՈՒԿՅԱՆԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՅԶՆԵՐԸ

Հայ բարբառների տարբեր խնդիրների ակադ. Գ.Ջահուկյանն անդրադարձել է իր մի շարք ուսումնասիրություններում: Այդ բնագավառի

նրա ողջ հայացքները ամփոփված են 1972թ. լույս տեսած «Հայ բարբառագիտության ներածություն» ծրագրային աշխատության մեջ: Հանդես բերելով քննադատական մոտեցում անցյալի բարբառագիտական տեսական շատ հարցերի քննությանը՝ Գ.Ջահուկյանը դրանց մոտենում է նորովի: Փորձենք սեղմ ներկայացնել տեսական այն նոր դրույթները, որ բերել է Գ.Ջահուկյանը այս բնագավառում:

1. Գ.Ջահուկյանը հստակորեն առանձնացնում է համաժամանակյա և տարաժամանակյա բարբառագիտության խնդիրները: Նա համաժամանակյա բարբառագիտության հիմնական հարց է համարում արդի բարբառների դասակարգման խնդիրը: Ցույց տալով առկա դասակարգումների առավելություններն ու թերությունները՝ Գ.Ջահուկյանը առաջ է քաշում *բարբառների բազմահատկանիշ դասակարգման անհրաժեշտությունը* և այդպիսի դասակարգում կիրառում արդի բարբառների նկատմամբ՝ ընդունելով 100 բարբառային հատկանիշ:

2. Բարբառների բազմահատկանիշ դասակարգումը Գ.Ջահուկյանը իրականացնում է մի նոր՝ քանական մեթոդով, որն անվանում է *գուգարանական-վիճակագրական*:

3. Բարբառների բազմահատկանիշ դասակարգման առաջաշմամբ և վիճակագրական մեթոդի կիրառմամբ Գ.Ջահուկյանը, ըստ էության, դառնում է հիմնադիրը լեզվաբանական մի նոր դիսցիպլինի (գիտակարգի), որն ինքն անվանում է *վիճակագրական բարբառագիտություն*:

4. Տարաժամանակյա բարբառագիտության խնդիրները մեզանում չեն անցել առանձին հարցերի քննության սահմանը, և տարաժամանակյա բարբառագիտությունը, իբրև այդպիսին, կայանում է Գ.Ջահուկյանի վերոբերյալ աշխատությամբ: Նա համակարգում է տարաժամանակյա բարբառագիտության խնդիրները՝ վերջիններս հանգեցնելով երկու հիմնական խմբի՝ ժամանակագրական և վերականգնողական: Այդ խնդիրների շրջանակներում քննում է V դարի բարբառային հիմնական տարբերությունների պատկերը, գրաբարի բարբառային հիմքի և վերջինիս մաքրության հարցերը, ինչպես նաև սրանց աղերսվող պատմական հարցեր (գրական լեզուների և բարբառների փոխհարաբերությունը հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններում, պատմական բառավիճակագրություն և բարբառային ժամանակագրություն), կատարում է V դարի բարբառների բազմահատկանիշ դասակարգում (40 հատկանշի հաշվառումով), ապա քննում է V դարից առաջ բարբառային իրողությունների արտացոլումը գրաբարում, մասամբ՝ բարբառներում և բարբառային հնարանությունները:

Ըննարկված բոլոր հարցերի շուրջ Գ.Ջահուկյանն անում է արժեքավոր եզրահանգումներ, որոնց կանոնադառնալից գեկուցման մեջ:

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ «ԾԻԱԾԱՆ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՋՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՐԺԵՔԸ

Հայ բարբառներում արևելահայ գրական լեզվի «Ծիածան» հասկացության բառագուգարանությունները հիմնականում կազմում են երեք խումբ. 1. *աղեղ, աղեղնավոր, աղեղնակ, Հիսուսի աղեղնակ...* 2. *գոտի, Աստծու գոտի, Հիսուսի գոտի, Աստվածամարտու գոտի, ծիրանի գոտի...* 3. *կանաչ-կարմիր, կանաչ-կապույտ*: Գրանցված են նաև սահմանափակ տարածում ունեցող այլ բառանվանումներ՝ *անծրևի հարս, որոտիկ, աղավնի, նշանակ*:

Թվարկված բառանվանումները հիմնականում ունեն պաշտամունքային-խորհրդանշական բովանդակություն, բացահայտում են մարդու հոգևոր ոլորտի աստիճանական զարգացման գործընթացը: Այս առումով՝ դրանք դրսևորում են հոգևոր-մշակութային որոշակի արժեք: Հարաբերական ժամանակագրությամբ դրանք խմբավորվում են ըստ *վաղեմության փուլերի* և սրանց համապատասխան *հոգևոր ոլորտների*.

1. Վաղնջական փուլ. առասպելաբանական-դիցաբանական հավատալիքների ոլորտ. *աղեղնավոր, աղեղ*՝ Հայկի (Օրիոն) պաշտամունքի խորհրդանիշ. *անծրևի հարս, ծովյան, որոտիկ*՝ ամպրոպային աստվածության պաշտամունքի արտացոլումներ:

2. Հնագույն փուլ. հեթանոսական-դիցաբանական հավատալիքների ոլորտ. *գոտի, Աստծու գոտի, կամար*՝ իբրև երկնային արքայության խորհրդանիշներ (5-րդ դարից գրավոր ավանդված են *Արամազդայ գոտի* և *Աստուածակամար* հնագույն տարբերակները):

3. Հին փուլ. միաստվածության պաշտամունքի ոլորտ՝ Աստվածաշնչի Հին կտակարանի խորհրդանիշներով. *աղավնի*՝ մարդկությանը Աստծու շնորհած նոր կյանքի ավետարել-խորհրդանիշ, *նշանակ*՝ իբրև մարդկության հետ Աստծու կապած Հին ուխտի խորհրդանիշ:

4. Նոր փուլ. Զրիստոնեության ոլորտ՝ *Հիսուսի գոտի, Աստվածամարտ/Մարիամ մոր գոտի, Սբ. Կարապետի գոտի*՝ իբրև վկայություն հոգևոր սրբազորման և հավատի բարձրագույն աստիճանի (Նոր կտակարան):

Հոգևոր զարգացման նշված ոլորտների միջև աղերսները բացահայտվում են բառանվանումների՝ փուլից փուլ կրած բովանդակային և բառիմաստային փոփոխություններով.

1. խորհրդանիշ-բառերի *փոխանցում* հոգևոր հավատալիքների նոր ոլորտ՝ համապատասխան պաշտամունքային *վերաիմաստավորմամբ*. *աղեղ*՝ Հայկի, ապա Աստծու Հին ուխտի, *աղավնի*՝ նոր կյանքի, ապա նաև Սուրբ հոգու խորհրդանիշներ:

2. Նախորդ փուլի դիցանվան փոխարինում նոր՝ Աստվածաշնչի անուններով՝ գոտի՝ Արամագդի, ապա Աստծու, Հիսուսի, Աստվածամոր, Սբ. Կարապետի...

3. Ի վերջո՝ բառանվանումների խորհրդանշական իմաստների մթազնում՝ ի հաշիվ «Ծիածան» իմաստի գերակայության:

Գայանե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԵՊՀ, Երևան

**ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ Գ.ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ճանաչողական գիտակարգը կամ, ինչպես հայտնի է այն աշխարհում՝ «կոգնիտիվ գիտությունները», արդի զարգացող գիտակարգերից Ճանաչողական լեզվաբանությունը իր մեջ ներառում է պրոբլեմների մի շարք, որոնք հավասարաչափ առնչվում են նաև լեզվաբանությանը:

Հայ գիտության պատմության մեջ ճանաչողության խնդրի նախապատմությունը՝ քննելիս բնականոն է թվում սկսել այն փիլիսոփայական ու լեզվաբանական մտքի վերլուծությունից: Այդպիսի փիլիսոփայաներից առաջինը Դավիթ Անհաղթն է, որը նեոպլատոնականությունը կարողացել է համատեղել արիստոտելյան մատերիալիստական իմացաբանության հետ: Լեզվի փիլիսոփայական ըմբռնման մեկնաբանություններից հիշարժան է մասնավորապես Գ.Ա.Բրուսյանի «Փիլիսոփայությունը և լեզուն» աշխատությունը:

Հայ հոգեբանության մեջ գիտակցության հիշարժան ուսումնասիրություններ են կատարել Լ.Ա.Օրբելին և Ա.Ա.Մեհրաբյանը: Վերջինս երկու մեծ մենագրություն է նվիրել գիտակցության և անձի հոգեբանության հարցերին:

Հայ լեզվափիլիսոփայական մտքի արժեքներից է Է. Աբայանի «Լեզուն և արտալեզվական իրականությունը» աշխատությունը, ուր քննության է առնված լեզվի և արտալեզվական իրականության դիալեկտիկան: Իր բնույթով եզակի է Է. Աբայանի «Болельщик здоровья» (1993) աշխատությունը, որն ուղղակիորեն վերաբերվում է հոգեկանի և գիտակցության իմաստային - գործառական հարաբերություններին: Այստեղ կիրառված է «Զննի՛ր խախտումները՝ օրինաչափությունները ճանաչելու համար» սկզբունքը, որի շնորհիվ էլ արդեն կարելի է այդ գրքում սահմանազատել արդի ճանաչողական գիտակարգի մի ամբողջ շարք պրոբլեմներ, դրանց նկարագրություններ ու բնութագրումներ:

Աշխարհայացքային ընդհանուր այսպիսի դիրքորոշման վրա Գ.Զահուկյանը կառուցել է հայ լեզվաբանության այն հիմքերը, որոնք հոգեկանի լեզվական, նշանային ու մշակութային դրսևորումներին տալիս են սուբստանցիալ մոնիստական հիմնավորում: Գ.Զահուկյանի՝ 1999թ. լույս

տեսած համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ ամփոփվում և կադապարային ընդհանրացման մակարդակով ներկայացվում են լեզվի մասին նորագույն պատկերացումները: Ջահուկյանը նշում է, որ ի տարբերություն կառուցվածքային լեզվաբանության, սուբստանցիալ լեզվաբանությունը առանձնացնում է լեզվի էության բացահայտման համար դրա սահմաններից դուրս գալու անհրաժեշտությունը: Լեզուն ստեղծված է և գործում է մարդու հոգեկան, հուզական, մտավոր և կամային մղումների արտահայտության համար: Դրանք կոչված են իրականության կողմից և ուղղված են իրականությանը: Չէ՞ որ վերջին հաշվով, հաղորդակցությունը մարդու իրական հարաբերությունների տեսակներից մեկն է միայն, թեկուզ և այն միջնորդավորված է նշանային, դարձյալ՝ ռեալ, նյութական կարգերով: Լեզվի՞ իբրև նշանային համակարգ դիտելը, ըստ Ջահուկյանի, նշանակում է ո՛չ միայն դրա կառուցվածքային ու գործառական կողմերի իմացություն, այլև արտալեզվական, այսինքն՝ այդ համակարգի արտաքին հարաբերությունների իմացություն. տվյալ դեպքում պատմամշակութային կամ բնագավառի ձևավորած արտալեզվական գործունեության ավանդույթների, գործելակարգի իմացություն: Խոսքալեզվական գործունեության մեջ իր արտահայտությունն է գտնում իրականությունն ու մարդու արտալեզվական գործունեությունը: Այսպիսով՝ լեզվամտածողությունն ու լեզվական գիտակցությունը, նաև լեզվումակությունը բնական և հասարակական իրականության փաստացի ածանցյալներն են, այսպես կոչված, հոգևոր ակտուալ, ռեալ և վիրտուալ գոյացություններ:

Համընդհանուր լեզվաբանական տեսության մեջ հիմնական սկզբունքներից բացի, որոնք են նյութեղենություն, միասնականություն, մոնիզմը և խնայողությունը, հստակորեն տարբերակվում են նյութական աշխարհի հատկությունները դրանց գիտական ճանաչողության միջոցներից: Լեզվաբանական լիարժեք կադապարը՝ օժտված կարգային հասկացական ապարատով, հոգեկան և ճանաչողական գործընթացների հետազոտության համար համարժեք է վիրաբուժական գործիքների սեղանի, որտեղից ոչ թե կարելի, այլ անհրաժեշտ է օգտվել մտքի ու հոգեկանի գաղտնիքները ինչպես կտրել - բացելու, այնպես էլ կարելի - կայցնելու համար:

Անշուշտ, Գ.Ջահուկյանի համընդհանուր լեզվաբանական տեսության արժանիքները չեն սահմանափակվում մեր ներկայացրած մասով: Սակայն արդեն այսքանով կարելի է վստահորեն ասել, որ ճանաչողական լեզվաբանությունը Հայաստանում ո՛չ թե սոսկ իր ներմասնեքը, այլև հայ փիլիսոփայական ու լեզվաբանական մտքի պատկառելի բուն ունի ձևավորած: Սկզբունքորեն ինչպիսիք էլ լինեն գիտակցության մասին պատկերացումները, դրանք չեն ժխտում վերջինիս սուբստանցիոնալ - առարկայական հիմքի դրսևորումները, որոնցից ամենահատկանշականը լեզվական դրսևորումն է: Այս հաստատումը կարևոր է այնքանով, որ սահմանում է գիտակցության հետազոտության արդի փուլի մեթոդաբանական հիմքերը:

**ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐ ՀՈՍԱՆԻՇՆԵՐԻ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ
ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

«Հանդես բանաստեղծաց փաղանունաբար ստորոզիլ նորավարժիցն սակս...» խորագիրը կրող հոմանիշների միջինհայերենյան ձեռագիր բառարաններում՝ վկայված XII-XIII դարերից, արձանագրված են բառեր, որոնք բացակայում են գրաբարյան բառարաններում:

Գրաբարյան բառարաններում չարձանագրված այդ բառերը կարելի է ներկայացնել որոշակի խմբավորումներով և կադապարներով:

1. Գերակշռում են հայ.ածանց+հայ.արմատ, հայ.արմատ+հայ.արմատ (//բայափիմք)+վերջածանց, փոխառյալ արմատ+հայ.արմատ, հայ.արմատ+փոխառյալ արմատ(//բայափիմք) կադապարներով կազմությունները:

2. Բառերի ներկայացվող ստուգաբանություններով պարզաբանվում է տվյալ հոմանշային շարքում այդ բառերի առկայության անհրաժեշտությունը, միաժամանակ հաստատվում դրանց գոյությունը նաև հետագա բառարաններով:

Գևորգ Ջահուկյանի հավաստումով «...հին հայերենի շրջանում տարածում են գտնում բառակազմության ... մի շարք նոր երևույթներ»:
Գրաբարյան բառարաններում չարձանագրված այդ նորակազմ բառերը վկայելով հաստատում են այդ երևույթների առկայությունը նաև միջին հայերենում, որը, ինչպես հայտնի է, առանձնանում է նորակազմ բառերի առատությամբ:

Գոհար ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԵՊՀ, Երևան

**ԽՆԴԻՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ-
ԻՍԱՍՏԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Ձեկուցման մեջ ուսումնասիրվում են խնդրանքի արտահայտման գործաբանական-լեզվաբանական իմաստների մի քանի առանձնահատկություններ: Խնդրանքը դիտարկվում է հաղորդակցման տեսության լույսի ներքո՝ որպես խոսողական ակտերի, մասնավորապես, դիրեկտիվների մի տեսակ: Ձեկուցման մեջ մենք ելնում ենք այն ընդունված դրույթներից, որ հաղորդակցության գործընթացը բացատրելու համար խոսողական ակտերի տեսությունը ոչ միայն առանձնահատուկ շեշտ է դնում խոսողի նպատակի վրա, այլ նաև ուսումնասիրում է այդ նպատակի փոխհարաբերությունն այլ արտալեզվական գործոնների հետ, ինչպիսիք են խոսողի սոցիալական դիրքը, հոգեբանական վիճակը, կարգավիճակը, ինչպես նաև լսողի

գիտելիքները, սոցիալական ստատուսը, հաղորդակցության միջավայրը և այլն:

Խնդրանքի, ինչպես նաև ցանկացած այլ դիրեկտիվների արտահայտման ձևերը մեծ փոփոխությունների են ենթարկվում՝ կապված խոսողի և լսողի դիրքի, մտերմության աստիճանի, կրթության և բազմաթիվ այլ գործոնների հետ: Մեր զեկուցումը նպատակ ունի ուսումնասիրել խնդրանքի արտահայտման առանձնահատկությունները գործառնության մեկ առանձին ոլորտում վերցրած: Տվյալ դեպքում ընտրվել է գրասենյակային միջավայրը և ուսումնասիրվել են գրասենյակային աշխատողների փոխադարձ խնդրանքի արտահայտման մի քանի առանձնահատկություններ՝ կախված գրասենյակում աշխատակիցների ունեցած դիրքից: Ըստ այդմ առանձնացվել են խոսակիցների երեք տիպաբանական զույգեր. ա) ստորադաս շ վերադաս; բ) վերադաս շ ստորադաս; գ) երկու հավասար դիրքի աշխատակիցներ: Չորս տարբեր գրասենյակներում իրական աշխատանքային իրադրություններից քաղված օրինակների վերլուծությունը ցույց է տվել, որ վերը նշված երեք տիպաբանական զույգերի միջև խնդրանքի արտահայտման ձևերը էապես տարբերվում են միմյանցից թե՛ շարահյուսական, թե՛ ձևաբանական, թե՛ քառային և թե՛ ոճական առումներով:

Բաբկեն ՂԱԶԱՐՅԱՆ
ԺՏԻ, Երևան

ԲԱՅԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԸ ՏԵՔՍՏՈՒՄ

1. Բայի խոսքիմասային յուրահատկություններից է ժամանակաձևերի բազմազանությունը, որի ուսումնասիրությունը մեկուսացված նախադասություններում դժվար թե ցանկալի արդյունք տա: Նրանք իրենց նրբերանգային գործառնությունները ի վիճակի են լիարժեք կերպով դրսևորել միայն կապակցված տեքստում, գերասույթներում ու գերասույթային բարդ ամբողջություններում: Քանի որ սրանք, հաջորդելով մեկը մյուսին և հետևողականորեն առաջ մղելով տեքստի ընդհանրական մասը, միաժամանակ սահմանազատվում են միմյանցից առարկայական չափանիշներով, իմաստային հաջորդականությամբ, տեքստային հնչերանգով, ինչպես նաև բայի արտահայտած գործողության եղանակի ու ժամանակի փոփոխություններով:

2. Տեքստում բայական ժամանակաձևերի հիմնական յուրահատկությունների հետազոտությունը պարզում է, որ բայն աչքի է ընկնում քերականական ինքնատիպ կարգերի բազմազանությամբ: Նման ոչ սովորական օժտվածությունը նրան հնարավորություն է տալիս տեքստում կամ հաղորդակցական բարդ կազմավորման մեջ ձևավորել նշանակալի մի ասպարեզ, ուր տվյալ կազմավորման մեջ մտնող լեզվական միավորների

միջև իրականացվող ներքին հարաբերությունները ընկալվում են որպես հատկանիշի վերագրման օրինաչափ կախվածություններ:

Էլիզա ՂԱԶԱՐՅԱՆ
ԵրՕԼԻ, Երևան

Գ.ՋԱՀՈՒԿՅԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՒՄԸ

Ակադեմիկոս Գ.Ջահուկյանի բնորոշմամբ լեզուն խոսքի կառուցման մեխանիզմն է, կամ ավելի ճիշտ միավորների կանոնների և կաղապարների մի ամբողջություն, որը գործի է դրվում մարդու օրգանիզմի կողմից:

Հիմք ընդունելով լեզվի այսպիսի բնորոշումը՝ Ջահուկյանը ստեղծել է մի համընդհանուր լեզաբանական կաղապար, որը սակայն իր կատարելությամբ հնարավորություն է տալիս նկարագրել ցանկացած օբյեկտ՝ ոչ միայն լեզվական այլ նաև արտալեզվական, ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեկան:

Խոսելով լեզվի և մտածողության փոխհարաբերակցության մասին՝ հարց է ծագում՝ արդյոք լեզու-խոսք հակադրությունը զուգահեռ ունի մտածական գործունեության մեջ: Պատասխանը միանշանակ է. լեզուն ընդունելով որպես որոշակի վիճակ և խոսքը որպես գործողություն՝ մոտավորապես կարելի է համադրել գիտակցությանն ու մտածողությանը: Համընդհանուր լեզվաբանական կաղապարի /ՀԼԿ/ կարգերի դասակարգումից պարզորոշ երևում է, որ ինչպես լեզուն, այնպես էլ խոսքը այստեղ համարվում են հոգեկան-նշանային երևույթներ, և նրանց միջև գործում են այնպիսի հարաբերություններ, ինչպիսին գործում են գիտակցության ու մտածողության միջև: Գիտակցությունն ու լեզուն համարվում են կախման գոյորոշ /սուբստանտիվ/ կարգի հոգեկան - նշանային դրսևորումներ, իսկ մտածողությունն ու հաղորդակցությունը, /և խոսքը որպես հաղորդակցության դրսևորումներից մեկը/՝ պատճառային առգոյորոշ /ատրիբուտիվ/ կարգի հոգեկան նշանային դրսևորումներ:

Այժմ տեսնենք, թե հեղինակն ինչպես է օգտագործում ՀԼԿ-ն՝ հոգեկան երևույթների լեզվական կազապարները բացահայտելու համար: Կիրառել ՀԼԿ-ն հոգեկան երևույթների նկատմամբ, նշանակում է բացահայտել ՀԼԿ-ի ընդհանուր կարգերի և սրանց եզրերի նշանային-հոգեկան մանակները /անարդյունք/, ցույց տալ, թե նշանային-հոգեկան ինչ կարգեր կան և այդ կարգերը ինչ եզրեր ունեն:

Գ.Ջահուկյանը, դիմելով լեզվի սոսյուրյան տեսությանը, որի հիմքում լեզվի նշանային բնույթն է, ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ Սոսյուրը նշանի տակ նախ և առաջ հասկանում է հոգեկան էություններ. ոչ թե կապն է իրերի և իրենց անվանումների միջև, այլ հասկացության կապը

ակուստիկ պատկերի հետ: Ըստ նրա՝ նշանը երկկողմ հոգեկան գոյ է: Մակայն Մոսյուրը անտեսում է մի պայմանականություն իրականում նշանը եռակողմ է: Այն դառնում է նշան միայն այն դեպքում, երբ որևէ մեկն ընկալում է այն որպես այդպիսին, այսինքն անհրաժեշտ է, որ՝ 1. լինի ինչ որ բան, որը կազմի բովանդակության պլան, 2. որևէ բան, որը կազմի արտահայտության պլանը և 3. որևէ մեկը, որ այս կապակցությունն ընկալի որպես այդպիսին:

Հոգեկանի հասկացության մեջ են մտնում նաև նրա դրսևորման ամենացածր ձևերը, զգայությունների բոլոր դեպքերը, երբ արտաքին միջավայրի և օրգանիզմի միջև առաջ է գալիս պատճառահետևանքային կապ, ինչպես նաև օրգանիզմում արտաքին դրոշիչի փոխարինողը /նշանը/ հանդես է գալիս որպես հետևանք: Փաստորեն լեզվի սեմիոտիկ մեկնաբանությունն է ընդլայնվում:

Ասվածից հետևում է, որ հոգեկանության կարգի հիմքում ընկած են կախվածության և պատճառականության կատեգորիաները: Հոգեկան երևույթների կարգային դասակարգումը հենվում է այս երկու ընդհանուր կարգի վրա: Առաջին դեպքում առարկաներն են առնվում իրար հետ ունեցած որոշակի հարաբերությունների՝ կախումների մեջ, երկրորդ դեպքում այս կախումներն են առնվում իրար հետ ունեցած հարաբերությունների մեջ: Այլ կերպ ասած՝ 1-ին հարաբերությունը հաղես է գալիս որպես ընկալում, 2-ը՝ որպես գիտակցություն, 3-ը՝ որպես լեզու: Սրանք են այն երեք կախումային կարգերը, որ հանդես են գալիս հոգեկանի ոլորտում: Նմանատիպ 3 կարգերը, ըստ մույն առարկա-նշան, նշան-նշան, նշան-արտահայտիչ հարաբերությունների կարելի է տարբերակել նաև պատճառական հարաբերությունների, ժամանակ՝ 1. մոդալականություն, 2. մտածողություն, 3. հաղորդակցություն: Այսպիսով՝ Ջահուկյանն առաջարկում է հոգեկանի 6 կատեգորիաներ, որոնցից յուրաքանչյուրը բնութագրում է ՀԼԿ-ի 6 եզրերով:

Վալերի ՄԱՐԿԱՐՅԱՆ

ՀՀ Կառավարությանն առընթեր ստանդարտացման վարչություն, Երևան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐԸ ԱՐԴԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ

Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների երևան գալը գիտնականների և մասնագետների առջև կրկին դրեց զրեթե մույն խնդիրները, որոնք լուծում էր Մեծն Մաշտոցը հայկական գրերը ստեղծելիս: Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների պայմաններում լեզվի կենսագործունեության համար խիստ կարևոր է դառնում այդ տեխնոլոգիաներում լեզվի լիարժեք կիրառման ապահովումը:

Արդյո՞ք ընդունելի է, որ ներկայումս լայն տարածում գտած բարձրորակ օտարերկրյա համակարգչային ծրագրերում խսկառ զրկված ենք ոչ միայն հայերեն տառատեսակներից, ստեղծաշարով աշխատելուց, այլև

տարրական սխալներն ուղղելու, տողադարձող, այբբենական դասակարգում կատարող և մի քանի այլ օժանդակ ծրագրեր կիրառելու հնարավորությունից: Հայերեն աշխատողը այդ ամենը ստիպված է անել՝ դիմելով զանազան հնարների, ինչն իր հերթին միայն վատթարացնում է իրավիճակը՝ ստեղծելով այն խաբկանքը, թե խնդիրները լուծվել են:

Իրականում, ինչպես ցույց է տալիս փորձը, ազգային ստանդարտների մակարդակով ընդունված լուծումները անկենսունակ են, քանի դեռ չեն ընդունվել ստանդարտացման միջազգային ստյաններում և չեն ներդրվել համակարգչային ծրագրեր մշակող միջազգային առաջատար ընկերությունների կողմից: Հայերենի գրանշանները կանոնակարգող ՀՍՏ 34.002-97 և ՀՍՏ 34.002-99 ազգային հիմնադրական ստանդարտների դառը փորձը դրա վառ ապացույցն է: Հարկ է նշել, որ այդ բնագավառում ոչ պետական կառույցների գործունեությունը ոչ միայն էապես չբարելավեց վիճակը, այլև խանգարում է խնդրի արմատական լուծմանը, քանի որ այժմ գերիշխում են սեփական պատվախնդիր շահերը:

Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնասիրությունը և դրանց զարգացման միտումը՝ թույլ է տալիս պնդելու, որ կան բոլոր տեխնիկական նախադրյալները՝ հայերենը դրանցում լիարժեք ներդնելու համար:

Դրա համար անհրաժեշտ է՝

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ՀՀ ԳԱԱ, ՀՀ կառավարությանն առընթեր ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման վարչության և ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության համատեղ ծրագրերի մշակում և դրանց ներդրում:
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ազգային ստանդարտների մշակում, ընդունում և դրանց հիման վրա միջազգային ստանդարտների մշակում:
3. Ընդունել ՀՀ կառավարության որոշում՝ բնագավառի հիմնադրական ստանդարտները պետական հիմնարկներում և զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոցներում պարտադիր ներդնելու մասին:

Աշոտ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Խ.Արովյանի անվան ՀՊՄՀ, Երևան

ՀԱՅՈՑ ԼԵԶԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Գ.ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բավական լայն ու բազմակողմանի են Գ.Զահուկյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, պատմահամեմատական քերականություն, հայ բանասիրություն՝ ամենալայն ընդգրկումով, հայ բարբառագիտություն, հայոց լեզվի տեսություն. ահա ոչ լրիվ բնագավառներ, որոնցում ևս Գ.Զահուկյանի գիտական հետաքրքրությունները շրջանակներ են:

որոնց անդրադարձել է ականավոր լեզվաբանը՝ նվիրելով ծավալուն ուսումնասիրություններ:

Գ.Ջահուկյանի աշխատություններում առանձին տեղ են զբաղում հայոց լեզվի պատմության հարցերը: Մեծ է նրա ներդրումը հայոց լեզվի պատմության ստեղծման, նրա զարգացման, գիտական սկզբունքների մշակման ու բազմաթիվ կնոռոտ հարցերի լուսաբանման գործում:

Հայոց լեզվի պատմության հարցերը գիտնականին զբաղեցրել են տակավին 50-ական թվականներից: 1956 թ-ին լույս տեսավ «Հայոց լեզվի պատմության պերիոդիզացիայի հարցերը» ծավալուն հոդվածը, որին հետևեցին նոր՝ ուսումնասիրություններ («Очерки по истории дописменного периода армянского языка», 1967), «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» (1969), «Հայոց լեզվի պատմություն (նախագրային շրջան)», (1987):

Կարելի է առանց չափազանցության ասել, որ այս ուսումնասիրություններով ելնք է դրվում հայոց լեզվի պատմության նորովի ուսումնասիրությանը՝ լեզվաբանական ժամանակակից մակարդակով ու հայագիտության վերջին շրջանի նվաճումների հաշվառումով:

Ձեկուցման մեջ խոսվում է այն հիմնական ու հանգուցային հարցերի մասին, որոնք հանգամանորեն ու գիտական խորությամբ քննարկված են վերը նշված աշխատություններում:

Հայկանուշ ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ԱՐՄԱՏԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐՈՎ ՀԱՍԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

1. Հայերենի բարբառների բառապաշարի իմաստաբանության ուսումնասիրությունը ի հայտ է բերում ուշագրավ առանձնահատկություններ: Մեր ուսումնասիրության նյութը ժամանակակից արևելահայերենի արմատական ածականների բարբառային համարժեքներն են, դրանց իմաստաբանական, բառակազմական, հնչյունական և այլ դրսևորումները: Ուսումնասիրության ընթացքում մենք արդեն անդրադարձել ենք արմատական ածականներին համանիշ մի քանի իմաստային խմբերի, որոնք աչքի են ընկնում կիրառական բարձր հաճախականությամբ (ինչպես՝ *մեծ* և *փոքր* և այլն): Զննարկել ենք նաև իմաստաբանորեն երկբաղադրիչ, երբեմն եռաբաղադրիչ համանիշները (*քոչող*, Տգր. - *փոքր* և *սիրունիկ*, *սոնա*, Միս, Հվր., Վն. - բարձր ու գեղեցիկ և այլն), ինչպես նաև արմատական ածականների բառակապակցական համանշությունը (օրինակ՝ *սրտին փասերը բացված*, Սր. - *զվարթ, ջիլավը ծեղրը պահած*, Դրբ. - *զուսպ* և այլն): Հետաքրքրական են նաև իմաստային սահմանափակումներով դրսևորված համանիշները: Դա այն դեպքն է, երբ տվյալ ածականի

համանիշը բարբառներից որևէ մեկում իմաստային սահմանափակում ունի, այսինքն՝ կարող է վերաբերել միայն կնոջ կամ տղամարդու, երեխայի, կենդանու, բույսի և այլն: Օրինակ՝ հին ածականին համանիշ է *շամշա* ձևը, որը Ակնի բարբառում ասվում է միայն մթերքի մասին, փուչ բառի *չալուղ* հոմանիշը *Համշենի* բարբառում կիրառվում է միայն ընկույզի հատկանիշն արտահայտելու համար և այլն:

2. Սույն զեկուցման մեջ մեր ուշադրության առարկան արմատական ածականների այն համանիշներն են, որոնք հանդես են գալիս փոխաբերական իմաստներով: Այդ համանիշներն քննության ենթադրում են նշյունական, բառային-բառակազմական, հատկապես՝ իմաստաբանական առանձնահատկությունների տեսանկյունից:

3. Արմատական ածականների փոխաբերական կիրառությամբ հանդես եկող համանիշները իրենց հիմքում ընկած ունեն գանազան առարկաների կամ երևույթների ընդհանրություն և նմանություն: Երբեմն դրանք դրսևորում են որևէ երևույթի կամ առարկայի հատկանշական կողմերից մեկը: Օրինակ՝ *ամենի* բառը Մուշի բարբառում ունի *յոթկանք* ձևը, իսկ մի քանի բարբառներում՝ *ջանավար* ձևը, որոնք հանդես են գալիս փոխաբերական իմաստով: *Թշնամի* բառի համար Սեբաստիայի և Խարբերդի բարբառներում որպես համանիշ է կիրառվում *մեռ* ձևը, որը սատանայի, չարի անվանումն է և այլն:

4. Արմատական ածականների բարբառային համանիշները առավելապես արտահայտվում են բառակապակցությամբ, որոնց դեպքում ևս առկա է փոխաբերաբար ընկալումը: Այսպես՝ *առաքինի* բառի համար բարբառների մեծաթիվ խմբում ունենք *աչքը դռանը, հալալ կաթնակեր* և այլն բառակապակցություններով արտահայտված համանիշները:

Կարինե ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
Մլա. Հերացու անվան ԲՀ, Երևան

ՌՈՒՄ - ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ - ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԱԿԱՆ
ՇՓՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏԵՐՄԻՆԱԾԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

1. Լեզվական շփումները և երկլեզվությունը միևնույն երևույթի տարբեր կողմերն են, որոնք ենթադրում են երկլեզվության /բազմալեզվության/ գոյություն: Սակայն առկա է նաև երկլեզվության /բազմալեզվության/ այնպիսի տեսակ, երբ լեզվական շփումները բացակայում են:

2. Ռուսերենի և հայերենի, անգլերենի և հայերենի շփման հետևանքով խոսքային որակի փոփոխության և լեզվական փոխներթափանցման երևույթներն առաջացել են երկլեզվության

արդյունքում: Ռուսերենի և անգլերենի մամանակությամբ հայերենում ստեղծված բառերը, ոճերն ու արտահայտությունները, փոխառությունները կիրառվում են լեզվի գործածության բոլոր ոլորտներում, այդ թվում՝ պաշտոնական գրագրության և տերմինաշինության մեջ:

3. Մինչև վերջերս փոխառյալ բառերը հայերենին էին անցնում ռուսերենից, երբեմն՝ ռուսերենի միջոցով: Ներկայումս նոր փոխառությունների աղբյուր է հանդիսանում մասն անգլերենը:

4. Պաշտոնական գրագրության և տերմինաշինության բնագավառի լեզվավիճակի քննությունից պարզվում է հետևյալը.

ա) փոխառյալ բառերի մեծ մասն ունի հայերեն համարժեքներ, և նախընտրելի է դրանց գործածությունը. *անեսթեզիա - անզգայացում, սինդեամյոզիա, արթրոլոզիա - հոդաբանություն, կրիզիս - ճգնաժամ* և այլն,

բ) ռուսերենից և հայերենից անցած տերմինների որոշակի մասը ենթարկվում է հայերենի քերականության օրենքներին, ձուլվում նրա բառապաշարին, դառնում նոր բարդությունների, ածանցումների բաղադրիչ. *դեմոկրատացում, -որեն, -ական, -իկ, պլանավորում, -ավորող, -ային, պլանաշափություն* և այլն,

գ) նկատելի են նախածանցմամբ, վերջածանցմամբ և բառաբարդմամբ կազմված հայերեն տերմիններ փոխառու լեզվի ածանցավոր կամ բարդ բառի դիմաց. *անտիսեպտիկ - հականեխիչ, ալկոհոլիզմ - զինեմություն, ադենոկիստոմա - գեղձաբշտությունը,*

դ) հունալատինական նախածանցները, վերջածանցները, տերմինատարբերը ռուսերենի միջոցով անցել են հայերենին և ունեն հայերեն համարժեքներ. *assimilatio - առնմանում, aerophobia - օդափախություն,*

ե) լայնորեն տարածվում են անգլերենից կատարվող փոխառությունները՝ հատկապես մարզական տերմինաբանությանը, այլև տնտեսագիտությանը և համակարգչային տեխնիկային առնչվող. *marketing - մարկետինգ, manegement - մենեջմենտ /կառավարում, կազմակերպում/, bit - բիտ, byte - բայտ, bank - note - բանկնոտ (թղթադրամ, բանկատոմս)* և այլն:

Ներսես ՄԿՐՏՉՅԱՆ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան

ՊԱՄԻՐՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԸ

Զեկուցումը նվիրված է հայերենի և պամիրյան լեզուների բառային ընդհանրությունների հարցին:

Հայ լեզվաբանության մեծ երախտավորը՝ Հ. Աճառյանը, նշել է, որ իրանական ճյուղի բազմաթիվ լեզուներ՝ զենդերեն, աֆղաներեն, քրդերեն, բելուջերեն, օսերեն, սոգդիերեն,

«նույնպես և ավելի կարևոր առաջնորդ են մեզ համար որոշ հարցեր լուծելու և որոշ բառերի գոյությունն ու ձևերը գուշակելու համար» (ՀԼՊ, 2, էջ 602-603):

Անցյալ դարի 70-ական թթ. գիտական աշխարհին իմացավ Պամիրի լեռնաշխարհում մի խումբ իրանախոս ժողովուրդների գոյության մասին. դրանք են՝ յիդգի, մունջաներեն, վախաներեն, սարըքուլերեն, շուգնաներեն, սանգիլիերեն, ռուշաներեն և այլն, որոնք պահպանել էին պարսկերենից ավելի հին հատկանիշներ: Այդ լեզուների վերաբերյալ առ այսօր լույս են տեսնում մենագրություններ: Տոմաշեկը 1896 թ. գտավ հայերեն սկունդ «շուն» բառի գուգահեռը պամիրյաններում skon «լակոտ» նշանակությամբ:

Մեր ուսումնասիրությունները այն համոզմանը բերին, որ հայերենի բառապաշարում կան շուրջ 200 բառեր՝ պամիրյանների հետ նույն հնչմամբ և նույն նշանակությամբ, որոնցից շատերի ստուգաբանությունն ու կազմությունը փորձել ենք բացահայտել:

Քանի որ հայերենը անմիջական հարևանության մեջ չի եղել պամիրյան լեզուների հետ, ուստի ենթադրում ենք մի միջնորդ լեզու, որպիսին կարող էր լինել սկյութերենը

(սակերենը): Մ.թ.ա. 7-4 դդ. և ավելի ուշ սկյութական (սակական) լեզվով խոսող ժողովուրդները սփռված էին Աֆղանստանից մինչև Սև ծովի ավերը: Քսենոփոնի «Կյուրոպեդիայում»՝ տեսնում ենք սակերին արմենների հետ կողք-կողքի՝ Կյուրոսի արշավանքներին մասնակցելիս:

Ռոզա ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ՀՆՉՅՈՒՆԱԳՐԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանավոր խոսքն աչքի է ընկնում անմիջականությամբ և գոյություն ունի որպես կենդանի հաղորդում՝ իրեն հատուկ հնչերանգով, մեղեդայնությամբ, հնչման պարբերականությամբ: Լեզվական նյութի իրականացման հենց այս ձևին է բնորոշ հնչյունային արտահայտչականությունը:
2. Արտաբերումը կախված է խոսողի անհատական տվյալներից, խառնվածքից, տրամադրությունից: Եթե խոսողը հավասարակշռված է, ապա նրա խոսքը կինչի հանդարտ, հաղորդվող տեքստին բնորոշ արագությամբ, հուզված պահերին հնարավոր է արտասանության արագացում կամ դանդաղում: Խոսքի արտաբերման նորմալ տեմպը կարելի է համարել միջին նորմա, որը կարող է ունենալ շեղումներ՝ միջինից բարձր կամ ցածր: Շեղումները կախված են խոսողի տարիքից, հոգեվիճակից, կրթությունից, սոցիալական ծագումից: Առաջին երկուսն անցողիկ բնույթ են կրում, իսկ մյուսներն ավելի կայուն են:
3. Գրային արտահայտչականությունն ուսումնասիրվում է գրային ոճաբանության կողմից, որը սերտորեն կապված է հնչյունային ոճաբանության հետ: Եթե վերջինիս համար կարևոր է լսողական տպավորությամբ ստեղծված արտահայտչականությունը, ապա գրային

ոճաբանությունն զրադվում է զրավոր խոսքի տեսողական տպավորության արտահայտչականության քննությամբ:

Այս տեսակետից կարևոր է, որ զրավոր խոսքում սովորական տառատեսակները, շեղագրերն ու գլխատառերը, կետադրական նշանները գտնվեն իրենց տեղերում, անհրաժեշտ պատշաճությամբ կատարվեն տեքստի կառուցվածքային տրոհումները: Պակաս կարևոր չէ էջի ընդհանուր պատկերը, հատված ստղերով գրությունը և այլն:

4. Որոշ դեպքերում տառը դիտվում է որպես ինքնատիպ մի կառույց, որն ունի իր չափերը, ոճավորումն ու ներդաշնակությունը: Պատահական չէ, որ շատ ճարտարապետական հուշարձաններ արժեքավորվել են մասնրանց վրա դրոշմված հայկական տառերի ու տառահյուսվածքների փորագրություններով, որոնց հեղինակները նշանավոր ճարտարապետներ են: Այնպես որ, շփման եզրեր կարելի է փնտրել տառարվեստի և ճարտարապետական արվեստի միջև, իսկ բոլորնառաջ և կենդանագրերը վկայում են տառարվեստի ու մանրանկարչության ակնհայտ կապի մասին:

Անահիտ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ՉԱՀԱՐՄԱՀԱՆԻ ԽՈՍՎԱԾՔԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պատմությունից հայտնի է, որ Պարսկաստանում հայկական գաղթօջախներ ստեղծվել են դեռևս 10-11-րդ դարերում: Դրանք հոծ բազմությամբ համարվել են Շահ Աբաս I կողմից 1604-1605 թթ: Վերջինս Հին Ջուդայից, Արարատյան դաշտավայրից, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերից գերեվարել և Սպահանում ու նրա շրջակայքում վերաբնակեցրել է մեծ քվով հայերի: 1946 թ. դրությամբ Սպահանի գաղթօջախը ունեցել է շուրջ 7 շրջան՝ 70 հայաբնակ գյուղերով: Դրանց խոսվածքները մինչև այժմ ուսումնասիրված չեն: Ձեկուցումը այդ 7 շրջաններից մեկի՝ Չահարմահալի խոսվածքի ձևաբանական նկարագիրը ներկայացնելու փորձ է: Խոսվածքը, ըստ ձևաբանական դասակարգման, պատկանում է ում ճյուղին, ըստ հնչյունաբանական դասակարգման՝ եռաստիճան, շնչեղ ձայնեղներով բաղաձայնական համակարգին, բազմահատկանիշ վիճակագրական դասակարգմամբ մտնում է արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբի մեջ:

1. Խոսվածքի հիմնական հոգնակերտ մասնիկներն են՝ եր, ներ, ք:

Մի

շարք միավանկ բառեր եր-ին գուգահեռ ունենում են ան հոգնակերտ (գ'օդ-գ'օդան, մուկ-մըկան, ճուտ-ճըտան):

2. Բացառական հոլովը կազմվում է -ից, գործիականը՝ -ով մասնիկներով,

իսկ ներգոյականի իմաստն արտահայտվում է ուղղականաձև կամ տրականաձև (կըճուճը //կըճըճին):

Գոյականների մեծագույն մասը հոգնակիում ենթարկվում է ու հոլովման

(քախկըններու, գ'եղարենքու):

3. Առկա են իսա, իդա, ինա, իստի, իտի, ինդի ցուցական, քուզը ստացական դերանունները:

4. Անցյալի համադրական ձևերում ե և ա խոնարհման բայերի վերջավորությունները նույնանում են (էրթէյի, էրթէյիր, էրթէր):

5. Օժանդակ բայը խոնարհվում է հետևյալ կերպ՝ եմ, ես, է՛ եմք, եք, են, ի, իր, էր, ինք, իք, ին:

6. Պայմանականը կազմվում է կ(ը), հարկադրականը՝ պիտի, պըտի եղանակիչներով: Պայմանականի կ(ը) եղանակիչից հետո մի քանի բայերի նախասկիզբ ա-ի դիմաց կա օ (կօսեմ, կօնեմ, կօծեմ):

7. Ըղձական եղանակի ժխտականը գուգահեռաբար կազմվում է ոչ և չ մասնիկներով (չըլնէյի//չըլլէնէյի և ոչ ըլնէյի, ոչ ըլլէնէյի):

8. Ե խոնարհման ներգործական սեռի բայերը եզակի հրամայականում ունենում են է՛ (գըրէ՛, խըմէ՛), իսկ պատճառական բայերը՝ ու (ը) (վերցրուր, խըմցըրուր) վերջավորությունները: Լինել բայը ըլնել-ին գուգահեռ ունի ըլլէնալ ձևը:

Գոհար ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, Երևան

ԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՂԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՉ

1. Հունաբան հայերենն ստեղծվել է հիմնականում գիտական բնույթի երկերի քարգմանության ընթացքում: Այդ լեզուն որոշակի ազդեցություն է գործել ողջ գրական լեզվի վրա, և հետագա հեղինակներն այս կամ այն չափով կիրառել են նրա առանձնահատկությունները: Դրանցից հատկապես նշվում են նախածանցավոր (ինչպես նաև այլ բաղադրյալ, ակնհայտորեն արհեստական) բառերը, հունաբեն յուրահատուկ շարահյուսական դարձվածների պատճենումները և որոշ արհեստական քերականական ձևեր, այսինքն այնպիսի տարրեր, որոնք բացակայում են դասական հայերենում:

2. Մենք փորձում ենք այդ ակնհայտ իրողությունը դիտարկել այլ տեսանկյունից: Եթե հունաբանությունները բնագրի տառացի վերարտադրման արդյունք են, նորամուծություն լեզվի մեջ և հայտնվելու պահին լեզվական նորմի «խախտում» (իսկ հետագայում՝ նոր լեզվական նորմ), ապա ինչպիսի՞ն է պատկերն այդ նորմը չխախտելու դեպքում: Այլ

կերպ ասած, ինչո՞վ են միմյանցից տարբերվում միևնույն հունարեն տեքստի «դասական» և «հունաբան» բարգմանությունները:

3. Մեր ուսումնասիրությունը հիմնված է հունարեն Նոր Կտակարանի հատվածների տարբեր բարգմանությունների վրա. դասական՝ հայերեն կանոնական Աստվածաշնչի մի շարք հատվածներ բաղդատում ենք հունաբան՝ Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» մեջբերումների հետ:

4. Հունարեն յուրահատուկ շարահյուսական դարձվածները բառացի կամ նկարագրական եղանակով՝ հայերենին բնորոշ համապատասխան դարձվածների միջոցով բարգմանելու հանրահայտ հակադրության կողքին (նշենք նաև բաղադրյալ՝ այդ թվում նախածանցավոր բառերը պատճենելու և լեզվում եղած համարժեքներով բարգմանելու հակադիր մեթոդները) ամենից հաճախ դիտվում է հետևյալ տարբերությունը. հունաբան բարգմանիչները ձգտում էին դերբայական կապակցությունները բարգմանել դերբայական կապակցություններով, մինչդեռ դասական բարգմանություններում դրանց առավել սովորական համարժեքը հարաբերական նախադասությունն էր (եթե կապակցությունը հանդես էր գալիս որոշչի առումով կամ գոյականացված) և անորոշ դերբայի գործիական հոլովը կամ համադասական շաղկապով կապակցված դիմավոր բայական ձևը (պարագայի առումով կիրառվելու դեպքում):

Սիլվա ՊԱՊԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԿԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, հասարակական մեծ փոփոխությունների հետ կապված՝ առաջացել և առաջանում են նորանոր երևույթներ ու հասկացություններ և դրանց համապատասխանող տերմիններ: Շուկայական հարաբերությունները դարձել են առևտրի, արդյունաբերության և կյանքի մյուս բնագավառների շարժիչ ուժը:

Հայերենն իր պատմական զարգացման ընթացքում փոխառել է բազմաթիվ բառեր, որոնցում որոշակի թիվ են կազմում առևտրին, տնտեսությանը վերաբերող անվանումները:

Ժամանակագրական տեսակետից դրանք կարելի է բաժանել 2 խմբի՝ ա) հին շրջանից ավանդված և բ) նոր շրջանում կատարված:

ա) Հին շրջանի փոխառությունները հիմնականում գալիս են պարսկերենից, հունարենից. արժ(եք) – (պիլ. arzitan) «զին», մուրհակ (պիլ. muhrak) «պարտքի կամ դաշինքի համար ստորագրված կամ կնքված քուրթ», վաշխ (պիլ. vaxs) «դրամի քերած տոկոսը», վաճառ (պիլ. vacar) «առևտուր, շուկա» և այլն:

բ) Մեծ թիվ են կազմում նոր շրջանում կատարված փոխառությունները (հիմնականում եվրոպական լեզուներից). դրանք կարելի է բաժանել 2 ենթաշերտի՝

1. Փոխառյալ տերմինի համարժեքը չկա հայերենով, այն ամրակայվել է լեզվում՝ աուդիո, բյուջե, էմիսիա, կապիտալ, ֆինանս և այլն:

2. Փոխառյալ տերմինի դիմաց հայերենն ունի իր համարժեքը, և դրանք գործածվում են զուգահեռաբար. արժեզրկում-ինֆլյացիա, բռնաշորթություն-ռեկետ, դրամաշնորհ-գրանտ, շահաբաժին-դեվիդենդ և այլն:

Այս տերմինահամակարգում շատ տերմիններ նորաբանություն են, ընդ որում դրանց մի մասը արևելահայերենը վերցրել է արևմտահայերենից. գանձապետարան, դրամագանգված, եվրադրամանիշ, գեղչավաճառք, ապաստան (արևմտհ.), սակարան (արևմտհ.) և այլն:

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՊՃՀ, Երևան

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՅԸՆԵՐԸ

1. ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԱՅՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Թիֆլիսի Ներսիսյան և Էջմիածնի Գևորգյան ճեմարանները եղել են Ադրայանի աշխարհայացքի ձևավորման առաջին հանգրվանները: Հետագայում նրա գիտական միտքը ձևավորվել և ընդլայնվել է Մոսկվայի, Պետրոգրադի, Փարիզի համալսարաններում, ուր Օգյուստ Կանտի, Դյուրկհեյմի, Լևի Քրյուլի փիլիսոփայական հայացքները դառնում են հենակետ նրա լեզվաբանական մտքի ձևավորման համար: Այս գործում յուրահատուկ դեր ունեցան նաև դարվինիզմը և մարքսիզմը: Ադրայանը մերժեց հայագիտության դասական ըմբռումները, բայց և չդարձավ Մառի հետևորդ:

Նիկոլ Ադրայանը հայոց լեզվի ուսումնասիրության մեջ հեղաշրջում է մտցնում և այս հարցում դառնում ռահվիրա հայագիտական ուսումնասիրության մեջ: Հետագայում Հայաստանում, հայոց լեզվի ուսումնասիրության գործը հնդեվրոպական տեսությունից պիտի ազատագրեր ակադ. Գր.Ղափանցյանը:

2. ՈՒՐՎԱԳԻԾ ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ադրայանը հրապարակ է բերել իր տեսությունը՝ հայոց լեզուն ուսումնասիրել որպես ուրույն և տեղական հորինվածք: Այդ ուղղությամբ տասնյակ տարիների իր հետազոտությունները ամփոփել է

«Դիտողություններ հայոց լեզվի մասին», «Հնչաբանական դիտողություններ», «Լեզվաբանական մանրուք», «Բանասիրական մանրուք» հոդվածաշարում և «Բանասերի հուշագիրը» վերնագրով քսաներկու պրակներում (մոտ 400 էջ):

Հայկական շեշտի վերաբերյալ Աճառյանի տեսակետները, ըստ Աղբալյանի, առավել քան հակասական են: Աղբալյանի տեսակետը այս խնդրում հետևյալն է. հայոց լեզվի շեշտը սկզբնապես կայուն չի եղել. կախված արտաբերության ձևերից՝ այն շարժուն էր՝ երբեմն առաջնավանկային, երբեմն՝ վերջընթեր:

Աղբալյանը Սայաթ-Նովային անդրադարձել է՝ սկսած 1912թ.-ից, զբաղվել նրա երկերի նորովի ստուգաբանությամբ և մեկնությամբ, ստեղծել Սայաթ-Նովայի երկերի բառարան և դարձել Սայաթնովագիտության հիմնադրողներից մեկը:

Հասնիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊՃՀ, Երևան

ՀԱՋՈՂՎԱԾ ՏԵՐՄԻՆԱԿԵՐՏՈՒՄԸ՝ ՏԵՐՄԻՆԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Գիտատեխնիկական առաջընթացի յուրաքանչյուր քայլին ուղեկցող տերմինակերտման գործընթացը նաև լեզվաշինական, մասնավորապես, բառապաշարի հարստացման հզոր միջոց է, որ, մի կողմից, արտացոլում է տվյալ հանրույթի (և ոչ միայն նրա) հասարակական զարգացման ու նրա կողմից բնության ճանաչողության աստիճանները, մյուս կողմից՝ հենց իր իսկ լեզվի զարգացման փուլերը:

2. Հայ իրականության մեջ V դարում Աստվածաշնչի թարգմանությամբ սկզբնավորված, հունարան դպրոցի և հետագայում Մխիթարյան միաբանների ջանքերով զարգացում ապրած տերմինակերտման գործընթացը հակադիր քննությունեց մեր լեզվի արևմտահայ և արևելահայ հատվածներում՝ առաջինում պահպանելով տերմինակերտման դարավոր ավանդույթները, երկրորդում դրսևորելով ժամանակավոր նահանջ դեպի գուտ փոխառությունները: Տերմինակերտման, տերմինագործածության հիմնախնդիր դարձավ հակադիր սկզբունքների ծայրահեղ դրսևորումների՝ մաքրամոլության և օտարամոլության հաղթահարումը:

3. Ընդհանրություններով հանդերձ՝ տերմինակերտումը, ինչպես և տերմինագործածությունը զգալիորեն տարբերվում են բառակերտումից և բառագործածությունից: Տերմինակերտման կամ տերմինների թարգմանության գործընթացի հաջողությունը և տերմինի կենսունակությունն ապահովվում է ելակետային երկու դրույթների կիրառումով՝ ա) հասկացության իմաստի ճշգրիտ և լիակատար արտահայտում, բ) լեզվական օրինաչափությունների պահպանում:

4. Ստեղծված կամ քարգնանված տերմինի կենսունակությունն ապահովվում է նաև տերմինին՝ իբրև գիտաբառին ներկայացվող պահանջների պահպանմամբ՝ ա) մենիմաստություն, բ) հոմանիշ ձևերի բացառում, գ) սեղմություն, դ) տերմինային համակարգայնության և ստորակարգության ապահովում:

5. Փոխառյալ հասկացության տերմինի քարգնանությունը ևս տերմինակերտման գործընթաց է, և նույնն են բուն տերմինակերտմանն ու քարգնանությանը ներկայացվող պահանջները:

6. Տերմինագործածությունն ածանցյալ է տերմինակերտումից, և եթե չեն պահպանվում տերմինակերտման ելակետային դրույթներն ու պահանջները, ապա առաջին հայացքից հաջողված թվացող ինքնուրույն կամ քաղմանական տերմինների մի մասը մնում է որպես «բառաբանային հարստություն»: Տերմինի՝ լեզվում չկայունանալու օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հաղթահարումը այսօր էլ տերմինակերտման հիմնախնդիրներից է:

7. Չեկուցման մեջ փորձ է արվում «Ռուս-հայերեն պոլիտեխնիկական» բառարանից բերված մեքենագիտական տերմինների վերլուծությամբ հիմնավորելու վերը թվարկված թեզերը:

Արեն ՍԱՆԹՈՅԱՆ
ՎՊՄԻ, Վանաձոր

ԿԵՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱ ԱՐԴԻ ՓՈԼԻ ՄԻՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայոց լեզվի զարգացման աշխարհաբարյան շրջանում հայ լեզվաբաններն զգալի աշխատանք են կատարել կետադրության համակարգի ու նրա կիրառության ճշտումների, ճշգրտումների բնագավառում: Այդ փոփոխությունները կատարվել են հայոց լեզվի ու հայ լեզվաբանության զարգացմանը գույրընթաց: Այդ փոփոխությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1. Վերանում է կետադրական նշանի տվյալ գործածությունը՝ լեզվական իրողության գրավոր նշույթալորման անհրաժեշտ չլինելու պատճառով:

2. Ավելանում են նոր նշաններ, նոր կիրառություններ հիմնականում լեզվական իրողությունների նորովի ընկալման հետևանքով:

3. Նույն գործառույթը կատարող նշաններից մնում է մեկը: Համառոտագրության նշաններից դուրս է մնացել սլատիվը, իսկ այդ նույն երևույթի ցուցիչի դերը վերապահվել է միջակետին:

4. Երկու տարբեր կետադրական նշանների՝ նույն դիրքում գուգադիր գործածությունը կարող է հանգեցնել նրան, որ դրանք ձեռք բերեն ինքնուրույն նշանի արժեք: Օրինակ՝ ստորակետ – գիծը:

5. Հայերենի կետադրության համակարգի արդի վիճակը կարելի է համարել բավարար, որ հետևանք է լեզվաբանների զգալի աշխատանքի: Այսուհանդերձ այս բնագավառում կան անելիքներ՝ քերականական որոշ նշանների քերականական հիմնավորման հստակեցում, զուգահեռ կիրառությունների միասնականացում, նշանների կրկնակ կիրառությունների պարզում և այլն: Ձեկուցման մեջ փորձում ենք լուծում տալ այս հարցերին:

Նվեր ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան

ԻՐԱԴՐԱՅՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱՌՕՐՅԱ ԽՈՍՔՈՒՄ

1. Հաղորդակցական գործընթացի ընդհանուր հատկանիշներից այս դեպքում առանձնացվում են արտալեզվական հետևյալ գործոնները. ա) հաղորդակցական գործընթացի նախապատրաստված չլինելը, բ) հաղորդակցական գործընթացի ինքնակայությունը, ոչ պաշտոնական բնույթը, գ) խոսակիցների անմիջական մասնակցությունը: Այս հատկանիշները հավասարաբար չեն, բայց դրանց համատեղ առկայությունը բավարար հիմք է՝ առօրյա խոսքը որպես հաղորդակցության միջոց ընտրելու համար:

Հաղորդակցական գործընթացը ոչ այլ ինչ է, եթե ոչ «ընդհանրական կարգերով բացատրվող նշանային-իրադրային կարգերի հաստատում հենց այդ ընդհանուր կարգերի վրա» (Գ.Ջահուկյան): Եվ չկա լեզվական հաղորդակցության մի ուրիշ ոլորտ, որը բնութագրվի իրադրության հետ կապի սերտության այնպիսի աստիճանով, ինչպիսին առօրյա խոսքում է:

2. Առօրյա խոսքի՝ իրադրայնությամբ պայմանավորված առանձնահատկությունների բացահայտման տեսակետից առանձնակի կարևորություն են ստանում՝ ա) խոսակիցներին վերաբերող հատկանիշները (մասնակիցների թիվը, հասակը, սեռը, կրթությունը, խոսակիցների ակտիվությունը, խոսող-լսող դերի փոփոխությունը, նրանց միջև տարբեր տեսակի փոխհարաբերությունները, դիրքը, դերը, հարաբերությունը ժամանակի հետ և անհատական այլ առանձնահատկություն), բ) իրադրությամբ վերաբերող հատկանիշները: Վերջիններս բովանդակում են այնպիսի էական կողմեր, ինչպիսիք են իրադրության և հաղորդակցման կապը, իրադրության հաճախականությունը, հաղորդակցական գործընթացի տեղը, կողմնակի մարդկանց ներկայությունը և այլն:

3. Հաղորդակցության բուն գործընթացի համար իրադրությունը կարող է ունենալ եռատեսակ դրսևորում. ա) խոսքաշար, բ) տեսողական, զգայական միջավայր, գ) հաղորդակցությամբ նախորդող իրադրության իմացություն:

4. Իրադրայնությամբ ու հաղորդակցական գործընթացի ընդհանուր հատկանիշներով էլ հենց բնութագրվում են առօրյա խոսքին բնորոշ այնպիսի

յուրահատկություններ, ինչպիսիք են՝ հաղորդակցման ոչ բառային միջոցների օգտագործումը (զանազան շարժումներ, դիմախաղ և այլն), գերազանցապես բանավոր ձևով դրսևորումը, անդամատվածությունը, ինքնընթացությունը, զանազան կարգի հավելումներն ու բացարկումները, համապատասխան միավորների ընտրությունը, կառուցվածքային և ժանրային այլ իրողություններ:

Վերծինն ՄՎԱԶԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան

ՀԱՅԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՀԱՐՈՒՄԸ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(Ըստ ժողովրդագրական վկայությունների)

1. Առաջնորդվելով նվաճողական քաղաքականությամբ՝ Օսմանյան Թուրքիան գրեթե միշտ նպատակ է ունեցել երկրի տարածքում ապրող հնագույն մշակույթի տեր ժողովուրդներին բռնությունների, հավատափոխության և լեզվափոխության միջոցով մարդկային տարրական իրավունքները ոտնահարել, նրանց ճնշացնել, նյութական և մշակութային արժեքները յուրացնել և իրեն վերագրել: Այդ քաղաքականությունն սկզբնապես կիրառվել է բյուզանդացիների նկատմամբ, ապա՝ հայերի:

2. Ազգագրագետ-բանահավաք Սարգիս Հայկունու, Գրիգոր Գալուստյանի, Գևորգ Սարաֆյանի փաստագրական աշխատություններում վկայություններ կան, որ տակավին 1700-ական թվականներից Տրապիզոնում, Համշենում, Կիլիկիայում և Անատոլիայում ապրող հայերին թուրքերը հրով ու սրով ստիպել են հրաժարվել քրիստոնեական հավատից, մայրենի լեզվից և ընդունել մահմեդականություն: Այդ է պատճառը, որ հիշյալ վայրերում բնակվող հայերի որոշ մասը դարձել է թուրքախոս:

3. Երիտթուրքական կառավարության կազմակերպած Հայոց ցեղասպանության (1915-1922 թթ.) ընթացքում այդ խստություններն ավելի են սաստկացել, և նույնիսկ հայերեն խոսողների լեզուներն են կտրել: Մեծ եղեռնից վերապրող ականատես-վկաներից մեր գրի առած հարյուրավոր հուշերում և պատմական բնույթի երգերում (հայերեն և թուրքալեզու) ևս այդ մասին բազմաթիվ վկայություններ կան:

4. Պատմաքաղաքական հիշյալ հանգամանքներով պետք է բացատրել արևմտահայ որոշ շրջանների հայության թուրքախոսությունը և թուրքալեզու բանահյուսության առկայությունը:

ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ

1. Հատուկ անունների մեծ մասը (միայն եզակի թվով) գրաբարում ենթարկվում է *ա* արտաքին թերման հոլովման: Սակայն այստեղ հաշվի պետք է առնենք, որ գրաբարում ոչ մի հոլովում ձևային կամ իմաստային տեսակետից միօրինակություն չունեն: Թվում է, թե այստեղ *ա* արտաքին թերման հոլովումը պիտի բացառություն կազմեր, բանի որ այս հոլովման ենթարկվում էին միայն հատուկ անունները (նաև *տիտան* հասարակ անունը): Սակայն այստեղ ևս այդ ներդաշնակությունը խախտվում էր, որովհետև բոլոր հատուկ անունները չէ, որ այս հոլովմամբ էին հոլովվում: Այսպես՝ Յիսուս Բրիստոս, Պօղոս, Մովսէս, Ներսէս, Սարգիս, Վաչէ, Պետրոս և այլ անուններ հոլովվում էին *ի*, երբեմն նաև *ու* թերույթներով: Մի շարք հատուկ անուններ, որոնք առաջացել էին հասարակ անուններից, պահպանում էին հասարակ անվան հոլովումը: Օրինակ՝ սուրբ Նախավկային, սուրբ Բարձրաբերձին: Այսպես առաջանում էր հոլովումների գործածության սահմանների խախտում, ըստ որում այս խախտումները գրեթե բոլորը կատարվում էին հոգուտ *ի* հոլովման: Այս պատճառով հոլովումների մեջ տեղաշարժվելու ամենամեծ հակումը ցուցաբերում է *ա* արտաքին հոլովումը, որով թերված էին հատուկ անունները: Աճառյանի «Լիակատար քերականության» 3-րդ հատորում բերվում է հատուկ անունների ցանկ, ուր ընդգրկված 1083 անունների մեծ մասը միայն *ի* հոլովմամբ է թերվել: Դրանցից շատերը վերցված են «Աստուածաշնչից», ոչ մեկը հայկական ծագում չունի: Այսպիսով, մեր լեզվի հենց առաջին գրավոր աղբյուրներն իսկ ավանդում են հոլովումների մեջ տիրող անմիօրինակությունը:
2. Միջին գրական հայերենով ավանդված գրականության մեջ հատուկ անունների հոլովման տեղաշարժը արդեն ակնհայտ է: Այս իմաստով ուսումնասիրման առատ նյութ են տալիս հիշատակարանները: XII – XIII դարերի հիշատակարաններն իրենց լեզվական օրինաչափություններով շատ ավելի հարազատ են գրաբարին, քան հաջորդ՝ XIV, XV դարերի հիշատակարանները: Սակայն XII դարի հիշատակարանների լեզվական ամենամեծ շեղումը հատուկ անունների, հատկապես անձնանունների հոլովման փոփոխություններն են: Հատուկ անունների հոլովման նույնպիսի տեղաշարժ կա նաև XII դարի բժշկապետ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» բժշկարանում: Օրինակ՝ Մահամատի Ջաքարիայն, Մուսավայի որդին և այլն:
3. Միջին գրական հայերենի II ենթաշրջանում, XV դարից սկսած, ավանդված գրականության բոլոր տեսակներում հատուկ անունները մեծ մասամբ *ի* հոլովմամբ են թերվում: Որ հատուկ անունների համար *ի* հոլովումը տիրապետող է դառնում, վկայում է նաև այն, որ սեռական-

տրական ձևերից բացի, /- հոլովման օրինաչափություններին են ենթարկվում նաև մյուս հոլովածները: Օրինակ՝ ի Կիլիկիէ, Հեթմիւ և այլն:

Ռոբեր ՏԵՐՄԵՐԿԵՐՅԱՆ
Էքս-ան-Պրովանսի համալսարան, Ֆրանսիա

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ
ՈԼՈՐՏՆԵՐԸ

(համեմատական ուսումնասիրություն)

Արդի հայերենի երկու տարբերակների փոխհարաբերությունների հարցը, նրանց փոխազդեցությունները, շփման, մերձեցման կամ իրարից հեռացման և այլ միջլեզվական երևույթները, հատկապես վերջին տասնամյակի ընթացքում, դարձել են համազգային նշանակություն ունեցող կենսական հարցեր, քե՛ր բաղաբական և քե՛ր զուտ լեզվական ստումով:

Սույն գեկուցման մեջ մեր նպատակն է նախ կատարել երկու տարբերակների հանրալեզվաբանական վերլուծություն, այն է՝ որոշել յուրաքանչյուր ճյուղի կիրառական ոլորտները, այնուհետև, համեմատության միջոցով որոշել, քե ինչպես և որտեղ են կատարվում միջտարբերակային լեզվական շփումները և որոնք են նրանց կոնկրետ հետևանքները:

Լեզվի կիրառական ոլորտները կսահմանենք ըստ հետևյալ գործոնների.

ա. տվյալ լեզվով հաղորդակցվողների քանակն ու լեզվական գիտակցության չափը.

բ. լեզվի կիրառվման աշխարհագրական տարածքներն ու սահմանները.

գ. լեզվի իրավական կարգավիճակը ու նրա հասարակական գործառույթը, ֆունկցիան:

